

18847

894.99

4h-22




94.99

ՆՈՐԱՎԷՊ

40-39

պր.

ԱՂԶԿԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ




Գ Ր Ն Յ

ՏՕԲ. Կ. Յ. ՓԱՇԱՆՍԱՆ



معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولنمشدر.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1895

4350




1155

39

2003

[Small handwritten mark]



ՆՈՒԷՐ

ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱՏԵՆՋ ԱԶՆԻԻ ՊԱՏԱՆԻՈՅ

ՄԱՐՏԻՐՈՍԻ ԱՐԽԱՆԵԱՆ

Որ հանգեաւ ի Տէր

Տաակ եւ հիկզ արեկանս ծաղիկ հառակի վեց

Ի ԳԻՒՂՆ ՓՈՔՐ ԱՐՄԸՏԱՆ

1894 ՅՈՒՂԻՍ 28 ԻՆ

Նկատյ 1879 օգոսոս 16



UNRECOGNIZABLE FADING TEXT

UNRECOGNIZABLE FADING TEXT

ԱՂԶԿԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Ա.

1887 օգոստոսին, Բժշկական դպրոցին արձակուրդէն օգուտ քաղելով, գրօսական ճամբորդութիւն մը ընելու նպատակաւ, Պօլսոյ մօտակայ քաղաքներէն մէկ քանին այցելեցի :

Ա. յս ճամբորդութիւնը, խանգարուած առողջութիւնս դարմանելու համար կենսական պէտք մը դարձած էր, տարեկան քննութիւններու շարաշար աշխատելէ և քննութիւններս անցնելէ վերջը, տկարացած մարմինս կազդուրելու մեծ պէտք մը ունէի. հոգւով ու մարմնով ուժաթափ եղած էի :

Բժշկական վկայականս ստանալու համար դպրոցական շրջան մը ևս ունէի, յաջորդ տարին աւելի եռանդով աշխատելու համար, մարմնական կորովի բացարձակ պէտքը զգալի էր ըստ անուրանալի ճշմարտութեան թէ՛ առողջ միտք, յառողջ մարմնի :

Դպրոցին արձակուրդը չորս ամիսէն աւելի պիտի տւէր. առաջին ամիսը առանց աշխատութեան անցուցի. բայց միայն Տէրը գիտէ այս անգործութենէս զգացած տաղտուկս ու ճանճրոյթս : Ա. յս ճանճրալի վիճակիս վերջ մը տալ ուզեցի, քանզի մտաւոր ու մարմնաւոր յոգնութիւնս՝ բոլորովին լուրջ և գիտական աշխատութեամբ դրաղելու չ'էր ներեր :

Ա. յդ միջոցներուն գրեթէ նոր սկսեր էի մանր մունրը յօդուածներ գրելով, ուսանողական պարասպ ժա-

մերս հանրային օգտին ծառայեցնելու : Ուրեմն աշխատութեանս ձեւը փոխելով՝ վիպական գործ մը արտադրելը աւելի յարմար սեպեցի, որով արձակուրդիս երկրորդ ամիսը սկսայ գրել Մարիա^օ թէ Հայկանոյ՞ Վէպը :

Կը խորհէի թէ՛ այս աշխատութիւնը առանց ինձ յոգնութիւն պատճառելու ճանճրոյթս պիտի փարատէր, յուսախաբուեր էի, այս գործին զոհած երկու ամսուան աշխատութիւնս զիս բոլորովին խոնջեց :

Արդ, չորրորդ ամսոյն զբօսական պտոյտ մը անհրաժեշտ դարձած էր. վէպիս հրատարակութիւնը Հայրենիքի խմբագիր Մ. Մէլիքեան էֆէնտի յանձնելով՝ ճամբայ ելայ :

Ճամբուս վրայ Ն... քաղաքը հանդիպեցայ, ուր կ'ապրէր գրական հրապարակի վրայ երբեմն գիսաւորի մը պէս փայլող Հայ բժիշկ մը : Քանի մը օր այդ քաղաքը մնալ մտադիր էի. ուրեմն հարկը կը պահանջէր որ հրապարակէ քաջուած այդ մենակեաց տաղանդին այցելութիւն մը տայի :

Կիրակի օր մը այցելեցի :

Բնակարանն ալ իր բնութեան պէս մեկուսի եւ առանձնացեալ դիրք մը ունէր, քաղաքին միւս տուներէն բոլորովին անջատ :

Երբ դռնէն ներս ոտք կոխեցի, Մեծ և Փոքր Ասիոյ մենաստաններուն նման տխրազդեցիկ տպաւորութիւն մը կրեցի. որոնց մէջ կը տիրէ միշտ դարերու յաջորդող մեղամաղձիկ լռութիւն մը և գերեզմանական անշարժութիւն մը. կարծես թէ՛ հոն երբէք կեանքը գոյութիւն ունեցած չ'է...

Դուռը բացող սպասուհին զիս ընդունելութեան սենեակը առաջնորդեց. այս սենեակն ալ բնակարա-

նին արտաքին տեսքին կը համապատասխանէր, և իր տխուր երեւոյթովը քիչ մըն ալ զայն կը գերազանցէր:

Սենեկին մէջ հոգածու կանոնաւորութեամբ մը շարուած և պատերէն կախուած էին՝ մարդկային գործարաններու անդամակազմական իւղաներկ պատկերներ, ոգելից բիւրեղեայ ամաններու մէջ դրուած վիրաբուժական նմոյշներ, ինչպէս, կտրուած ոտք, ձեռք, ծիծ, շրթուէք, և այլն, և գրադարանին քովիկը մարդկային կմախք մը: Կարծես այս գերեզմանական տեսարանին տրամանոյշ տպաւորութիւնը աւելի ազդեցիկ ընելու համար պատէն կախուած է Քրիստոսի խաչելութեան պատկերը, և ծնրադիր, մեղմանոյշ աչերը երկինք ուղղած ու սիրուն մազերը անխնամ ետին ձգած՝ Մագրադինէին նկարը:

Շքասեղանին վրայ և հայելիին առջեւ դրուած է հրաչեայ մանկամարդ կնոջ մը կենդանագիրը, սև շըրջանակով և սեւ քօրտէլաներով շրջապատուած, հայելիին և լուսանկարին երկու կողմը արծաթեայ աշտանակներու վրայ տնկուած մոմերը այդ լուսանկարին դագաղի մը տեսքը կ'ընծայէին: Վերջապէս այս տան մէջ սուգ ու արտասուք կը հոտէր և մեռելական ընդհանուր տխրութիւն մը կը տիրէր...

Վայրկեան մը բաւ եղաւ ինձ, տիրող այս ընդհանուր սուգը նշմարելու. ինքզինքս այդ տխուր ու մեղամաղձկոտ ներգործութենէն ազատելու և մտածումներուս տարբեր ուղղութիւն մը տալու համար, սկսայ գրադարանին ապակիին վրայէն գրքերուն անունները կարդալ: Գիտական ու գրական երկերու ճոխ հաւաքածոյ մ'էր:

Գրադարանին մէջ ամենէն աւելի ուշս գրաւողը

ձեռագիր տետրակ մըն էր, միւսներէն տարբեր դիրքի մը մէջ դրուած ըլլալուն, որոշակի կրցի կարդալ նուրբ գրերով, հաւանականաբար կանացի փափուկ ձեռքով վրան գրուած յետագայ ուշագրաւ և շահագրգիռ տողերը :

ԻՄ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ

Մահուանէս վերջը միայն կարդացուի

Այս մեռելական տողերը կարդալով ակամայ դողացի, սոսկալի սարսուռ մը՝ ելեքտրական ցնցումի նման՝ մարմնոյս մէջ շրջան ըրաւ :

— Անշո՛ւշտ, ըսի մտովին, այս տետրակը իր մէջ պարունակելու է խորհրդաւոր անցեալի մը յիշատակը և թերևս կնոջ մը խորտակեալ սիրտը . . . :

Այս մտածումներու մէջ էի, երբ յանկարծ սենեակին դուռը բացուելով՝ անձանօթ բարեկամս իր վեց տարեկան սիրուն տղուն ձեռքէն բռնած ներս մտաւ :

Իսկոյն ձեռքս իրեն կարկառեցի, այցելութեանս նպատակը բացատրելով: Ինքզինքս ծանօթացնելու հարկ չ'էր մնացած, որովհետեւ այցեւորմասս սպասուհիին հետ կանխաւ իրեն դրկեցի :

Իր նկարագրութիւնը աւելորդ կը համարիմ, դէմքին ու հոգւոյն արտայայտութիւնը ապրած միջավայրին կատարելապէս կը համաձայնի. սակայն չը մոռնամ յիշել թէ՛ իր ամբողջ տխրութեանը մէջ գրաւիչ ու համակրելի երևոյթ մը, անուշ սրտագրաւում մը ունէր :

— Շնորհակալութիւնս կը յայտնեմ, ըսաւ նստելով և փոքրիկը գիրկը առնելով, արժանիքէս վեր կը

դտնեմ ձեր յարգանքներն ու համակրանքը . բացառիկ շնորհ մը՝ որ ձեր սրտին ազնուութեան ապացոյցն է :

— Շնորհակալութիւն չ'արժեր , դուք ձեր օգտաւէտ գրչով , սփոփիչ արհեստով և տաղանդաւոր մըտքով իրաւամբ ամենուն համակրանքն և սէրը գրաւած էք . ինձ նման հաղարաւոր անձանօթ բարեկամ սրբտեր կան որ անկեղծապէս կը համակրին ձեզ , ձեր գրչին երկարատեւ լռութիւնը մեր սրտերուն մեծ ցաւ եղած է :

Փոքրիկ Պօղոսիկին մազերը շոյելով և վրաս տխուր ակնարկ մը ձգելով յուզեալ շեշտով մը՝ ըսաւ .

— Է՛հ , ես իմ ժամանակիս ու տարիքիս պահանջը կատարեցի , ասկէց վերջը ասպարէզը ձեզ նման եռանդալից երիտասարդութեան է , դուք մեր սկսած գործին շարունակութիւնը պիտի ապահովէք , ձեր յաջորդներն ալ ձերինը :

— Բայց կը ներէք որ անկեղծաբար ըսեմ թէ դուք ձեր երկարատեւ փորձառութեամբը աւելի յարմարութիւն ունիք ընտրելու և գրելու , հանրութեան ամենէն աւելի օգտակար և ամենէն աւելի կենսական պէտքերուն վրայ : Ձեր առաջին առողջաբանական աշխատասիրութիւնը մեզ իրաւունք կուտայ աւելին խընդրելու , շարունակութիւնը սպասելու :

— Այդ մասին իրաւունք կուտամ ձեզ , երբ կեանքը դեռ իր ժանտալից թոյնով երիտասարդական արիւնս թունաւորած չէր , ես ալ ձեզի պէս կը խորհէի . սակայն հիմա , աւա՛ղ , անցան այն երջանիկ օրերն , ուր կեանքը հաճոյալի երազի մը նման կը վայելէի . . . : Սիրելի՛ , պարագայներ կան՝ ուր կեանքը իսկ աւելորդ բեռ մը կը դառնայ , ալ ո՞ւր կը մնայ անոր հաճոյքները : Այն երանեալ անցեալ օրերուն մէջ փառասիրութիւնը

իր մեծ դերը կը խաղար, ցուրտ հաշիւներ և անձնական
դէպքեր դեռ սառեցուցած չէին սրտիս եռանդալից
խանդը: Յիմար՝ այլ յուսալից երիտասարդութիւնն
էր որ զիս կը մղէր, եթէ ճակատագրային դժբաղդ
պարագայներ կենացս ներդաշնակութիւնը չը խան-
գարէին, անշուշտ նոյն երիտասարդական եռանդով
սկսած գործս, այսօր ալ պիտի շարունակէի

Լուեց . սրտին յուզումը և անցեալին տխուր յիշա-
տակները աչերը թրջեցին . արտասուաց երկու խոշոր
կաթիլներ որոշակի կը տեսնէի, բայց շուտով իր պաղ-
արիւնութիւնը գտաւ և աչքերը յանկարծ ցամքեցան :

Քիչ յետոյ, խօսքը դրած յօդուածներուս վրայ
բերելով՝ քաջալերեց զիս միշտ գրելու, մանաւանդ
առողջաբանական նիւթերու վրայ :

Սակայն իր մենակեաց կեանքը, անցեալին մէջ
կրած խորին վշտերը զիս հետաքրքրեցին հետազօտու-
թիւններս աւելի առաջ մղելու և պրպտելու իր կեան-
քին գաղտնալից կողմը, մասնաւորապէս այն ձեռա-
դիր Յիւստակարանը, որ անշուշտ իր կեանքին հետ
մեծ կապակցութիւն մը ունեցած ըլլալու էր :

Բ.

Սպասուհին սուրճը բերելով՝ ինձ միջոց տուած ե-
ղաւ մտքիս մէջ կազմելու հարցման այն ձեւերը, որ
ուղղակի իր կեանքին, իր անցեալին հետ պիտի շրփ-
ուէին : Խնդիրը փափուկ էր, ինձ երբէք վերաբերու-
թիւն չունեցած և իր ներքին կեանքին գաղտնիքը
պարունակող յիւստակարանին վրայ խօսք բանալը քիչ

մը դժուար գործ էր, չ'ըսեմ անպատշաճ :

Սուրճս երկար ատեն պաղեցնելով խմելէ վերջը, խօսակցութեան թելը ձեռք առի :

— Բաւական ճոխ գրադարան մը ունիք, ըսի :

— Այո՛ պատասխանեց, բայց նոր երկեր կը պակսին. երիտասարդական ժամանակիս բոլոր հրատարակութիւններն ունիմ, վեց եօթը տարի կայ որ բայ ի մի քանի զուտ բժշկական նոր հրատարակութիւններէ զիրք մը գնած չ'եմ: Սիրելի կնոջս մեռնելէն վերջը բոլոր փափաքներս վերջ գտան. այս փոքրիկ թռչունիս սիրոյն մէջ կը գտնեմ միայն ամեն հաճոյք եւ վայելք

— Ձեր վշտերուն խորին ըլլալը կ'զգամ, բայց կարծեմ նեղ օրերու մէջ գեղեցիկ գրքերն ալ լաւ ընկերներ են, միակ միջոց մը կեանքի մռայլները ցրուելու, վեհազնիւ հոգիներու հետ մտերմութիւն մը հաստատելու և այսպէս տխուր իրականութիւնը մոռնալով ոսկէանուրջներու մէջ ապրելու

— Սիրելի, իր պակասը բան մը չլրացներ, եթէ դուք ալ սիրող սրտի մը մանաւանդ տառապեալ հոգիի մը անկեղծ սէրը վայելէք, ըսածիս ճշմարտութեանը այն ատեն պիտի համոզուիք: Հիմակու հիմա երիտասարդ էք, դեռ կեանքը հաճոյից գեղադիտակին մէջէն կը տեսնէք :

— Կեանքի խնդիրներուն մէջ ձեր փորձառութիւնը անկասկած մեծ արժէք ունի, ըսի և խօսակցութեան նիւթը փոխելու համար աւելցուցի. եթէ կը ներէք՝ գրադարաննիդ անգամ մը աչքէ անցունեմ:

— Ս,մենայն հաճութեամբ ըսաւ եւ ոտքի ելնելով զիս գրադարանը առաջնորդեց. աւելի լաւ կարդացուելու համար ապակեայ փեղկերն ալ բացաւ :

Ես արդէն կանխաւ գրադարանը ամբողջ աչքէ անցուցեր էի, դիտաւորութիւնս չյայտնելու և հետաքրքրութիւնս կեղծելու համար ամենէն անկարելորդ գրքերուն վրայ իսկ դիտողութիւն մը կ'ընէի, երբ կարգը ձեռագիր Յիշատակարանին եկաւ, դարմանք կեղծելով հարցուցի.

— Ի՞նչ տարօրինակ վերնագիր, ձեռագիր վէ՞պ մըն է արդեօք...

— Այո՛, վէպ մը, մեր կեանքէն վէպ մը... պատասխանեց սրտին խորերէն հառաչ մը արձակելով.

— Ստուգիւ վէ՞պ մըն է... , կը մտած էի, եթէ իրօք վէպ մըն էր այն, իմ հետաքրքրութիւնս աւելորդ էր ուրեմն. չունէր ինձ համար այն շահեկանութիւնը՝ որ առաջին անգամ զգացեր էի, պարզ վէպ մը ի՞նչ կարեւորութիւն ունէր, թէեւ ըլլար շատ լաւ գրուած մը: Բայց անհաւատալի կը թուէր. անկարելի է որ պարզ վէպ մը ըլլայ այն, մտածումս այսպէս առաջ կը տանէի, այն նուրբ գրերը կնոջ մը հեղինակութիւն ըլլալը կը մատնեն, ուրեմն ո՞վ կրնար ըլլալ անոր հեղինակուհին, եթէ ոչ բարեկամիս վաղամեռիկ կիներ:

Մտածումներուս վերջ տալով՝ միամտաբար հեղինակին անունը հարցուցի.

— Ասիկա է, պատասխանեց մատովը շքասեղանին վրայ դրուած մանկամարդ կնոջ լուսանկարը ցուցնելով:

Աւելի հեռուները երթալու հարկ չմնաց, բուն խնդրոյն մօտեցեր էինք:

— Անկասկած ձեր հոգեւոյս ամուսինն է, ըսի, վիպագրելու լաւ յարմարութիւն մը ունեցած ըլլալու է:

— Չ'է, սիրելի, վիպագիր մը չ'էր, կեանքին երե-

ւոյթները պարզ կերպով ի գիր առնող կենսագիր մըն էր . իր անձնական Յիսուսականացն է այս՝ որ դամբանի մը պէս մեր բարքերուն զգուելի ու գարշելի պատկերները , մեր ընկերական կազմակերպութեան յոռի ու տգեղ կողմերը կը բովանդակէ :

— Վերնագիրը ինձ շատ տարօրինակ կ'երեւայ :

— Ամուսնանալէս առաջ իր կեանքին մէջ պատահած անձնական դէպքերը յիշատակեր է , որուն մէջ մեծ բաժին մ'ալ ես ունիմ . իր կենդանութեանը չ'է ուզած որ կարդամ : Ո՛հ թշուառ արարած , իր անմեղ հոգին ի՞նչ տառապանքներ կրեր է . ապերախտ ընկերութեան , խաբերայ ու կեղծաւոր մարդկութեան զոհ եղած է . . . կրած յուսախաբութիւնները և սրտմաշուքները զինքը կեանքի բեռին տակ ընկճելով՝ հուսկ ուրեմն սեւ հողին յանձնեցին

Եւ սրտաճմլիկ հառաչով մը աւելցուց .

— Զգացած ծանր վիշտերս աչացս աղբերակները ցամքեցուցին , շատ անգամ արտասուել կ'ուզեմ եւ չ'եմ կրնար , այս անբնական վիճակը սկսած է սիրտս կրծել և կեանքս մաշեցնել :

— Բայց , քանի որ մեր ընկերական բարքերուն հայելին է , անշուշտ օգտակարութենէ զուրկ չ'ըլլար , մարդկութեան մեծ բարիք մը ըրած պիտի ըլլայիք եթէ ծածկանուան մը տակ զայն մամուլին յանձնէիք , շատեր կը խրատուէին և այս կերպով իրենց յիշատակին մահարձան մը կանգնած պիտի ըլլայիք :

— Այո՛ , ըսաւ հեղնական ժպիտով մը , այն մարդկութեան համար՝ որ անոր նման անմեղ տկար արարած մը չարչրկած , խաբած ու զոհած է . ա՛յդ մարդկութեան

— Գէթ ուրիշները փրկելու և անոնց թիւը նուա-

զեցնելու համար ընկերութեան երեսին տալու էք՝
իր աւերիչ բարքերուն չար հետեւանքը . . . :

— Արհամարհանքս բաւական սեպած եմ, և այս
պատճառաւ գաւառական այս անկիւնը քաշուած եմ.
այս տեղերը գոնէ կեղծ քաղաքավարութիւն մը չիկայ
որ փայլուն անուաներու և շացուցիչ դիրքերու տակ
գարշելի ու մեղապարտ եղելութիւնները ծածկէ : Հոս
ամեն ինչ պարզ է . հէ՛գ ամուսինիս ստիպման վրայ՝
որ իր ատելութեանը արդիւնք է եղեր՝ այս տեղերը
բնակութիւն հաստատելէս շատ գոհ եմ և իր անմահ
յիշատակը արդէն զիս այս հողին կը կապէ :

— Վերջապէս, կարծեմ թէ լոկ արհամարհանքով
չարիքին առաջքը չ'առնուիր, զոհերուն կեանքը մի-
այն ազդու խրատ մը կրնայ ըլլալ . ինչպէս որ մեք՝
բժիշկներս վէրքերը բանալով ու մաքրելով կը բու-
ժենք, այնպէս ալ հասարակութեան մը բարոյական
վէրքերը բուժելու ենք . եթէ ձերինին նման զոհերը
մէյմէկ անկիւն քաշուելով մոռացման յաւիտենական
անդունդին մէջ կորսուէին, յառաջադիմութիւն ըս-
ուած բաները գոյութիւն չ'էին ունենար . ազգերը
անցեալէն փորձուելով՝ բարեկարգուած են և միշտ
այսօրը երէկէն պիտի խրատուի ու փորձուի :

— Շիտակը ձեր դիտողութիւններուն պատասխա-
նելու ո՛չ ոյժ ունիմ և ո՛չ ալ կամք . անշուշտ ա-
մեն ողջախոհ մարդ ձեզի պէս պիտի խորհէր, բայց
ես ահագին վիշտերու տակ ընկճեալ, գրեթէ բնագ-
դական կեանք մը կը վարեմ : Ձեր հետաքրքրութիւնը
գոհացնելու համար կ'արտօնեմ որ զայն կարդաք եւ
եթէ ձեր խիղճը ներէ՝ ազատ էք զայն հրատարակե-
լու, միայն կը խնդրեմ որ մէջը յիշուած բոլոր յատուկ
անուանները հասարակութենէն ծածկէք :


Այս անակնկալ յաջողութենէն չափազանց ուրախ՝
պատասխանեցի .

— Կը խոստանամ բոլորովին խղճիս ու ձեր կամ-
քին համեմատ վարուիլ . հետաքրքիրներուն Մսացա-
ծին վէպ մըն է ըսելով պիտի բաւականանամ :

— Ձեր խղճի վստահեցայ , բոլորովին ազատ էք ,
ըսաւ :

Օրուան մէջ որոշեալ ժամեր յատկացնելով՝ մէկ
քանի օրուան մէջ ընդօրինակեցի ինձ հետաքրքրու-
թիւն պատճառող Յիւստակարանին հետեւեալ շահա-
գրգիռ մասերը միայն :

Այլ եւ այլ նկատումներով մինչեւ ցարդ զայն հը-
րատարակութեան շտուի . մի քանի ամիս առաջ այդ
բժիշկ բարեկամիս մահուան ցաւալի լուրը ստուգելով
նկատումներս ալ իրեն հետ գերեզման իջան : Ուրեմն
խղճի կատարեալ անդորրութեամբ այդ յիւստակարանը
այսօր մամուլին կը յանձնեմ :



Գ.

Ի Մ Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ս

ԻԼՍԻԽԼՍԱՐ 1 ՄԱՐՏ 1875

Երկարատեւ հիւանդութենէ մը վերջը, երբ սիրելի մայրս վեց ամիս առաջ մեռաւ, ես տասնեւչորս տարեկան էի: Տարի մը առաջ փոքր քրոջս հետ Ամերիկացիներուն Հօմ-Սփուլէն շրջանաւարտ ելանք:

Դպրոց եղած ատենս կը փափաքէի կենացս նշանաւոր օրերն ու պարագայները գրի առնել. ահա այսօր կ'սկսիմ այդ փափաքս իրագործել:

Անշուշտ կենսագրութիւն մը յետ մահու միայն ուրիշէ մը կրնայ կարգացուիլ, որով ստիպեալ եմ անցքերը և դէպքերը իրենց բնական դոյներովը նկարագրել, առանց սուտի ճշմարտութիւնը արձանագրել:

Ճշմարիտ կենսագրութիւն մը գրողին հոգւոյն հայելին է, ասոր մէջ պիտի արձանագրեմ զգացումներս ու յուզումներս, վիշտերս ու հաճոյքներս, և պարագային համեմատ անհատական կարծիքս ու նկատողութիւններս:

Ուրեմն, այսօր կենացս նշանաւոր օրերէն մին է. այս յուշատետրովս ապագայ սերունդը զիս պիտի դատէ, արդ՝ կեանքիս դովելի կամ պարսաւելի կողմերը իրեն խղճին ու համոզման յանձնելով կը շարունակեմ:



Այսօր գրելու արժանի նշանաւոր բան մը չ' ունե-
նալուս, մեր ընտանեկան պատմութիւնն ընելով պի-
տի բաւականանամ:

Երեք եգրայրներս դեռ դպրոց կը յաճախեն, իսկ
ես քրոջս և սպասուհիի մը հետ տան գործերը կը
տեսնեմ, ինչպէս կերակուր, կար, լուացք և այլն:

Մօրս մահը հօրս վրայ խորապէս ազդած է, միշտ
տխուր, միշտ մտահոգ է, երբեմն որչա՛փ ուրախ և
զուարթ գիշերներ կ'անցնէինք՝ երբ դեռ մայրս ողջ
էր. հացկերոյթներ, պարահանդէսներ, երեկոյթներ
իրարու կը յաջորդէին, ո՛հ, երանեալ օրեր: Մայրս
կատարեալ տանտիկին, կարգապահ և տնտեսող էր.
իր հինգ ոսկի ծախսով պատրաստած հանդէսները՝
օտարներէն քսան ոսկի ծախս կը գնահատուէր, քիչ
կը ծախսէր՝ այլ շատ կը ցուցնէր:

Հէգ մօրս մեռնելէն վերջը, մեր տան մէջ գերեզ-
մանական տխրութիւն մը տիրեց:

Հայրս իր առաջին կրթութիւնը և դաստիարակու-
թիւնը հոգեւոյս վառօդապետ Պօղոս պէյի շնորհիւ
Անգլիոյ մէջ ստացած է. իր լուրջ բնաւորութեամբը
և բարձր դաստիարակութեամբը ամենուն համակ-
րանքը շահած է: Տասն եւ հինգ տարիէ ի վեր մե-
ծահամբաւ և բազմաճիւղ հայ վաճառատան մը մէջ
տօմարակալի պաշտօն կը վարէ: Այս վաճառատան
բարգաւաճման գլխաւոր և առաջին սատարը ինքը ե-
ղած է. իր շնորհիւ այս տունը, առաջին անգամն ըլ-
լալով եւրոպական գործարաններու հետ ուղղակի յա-
րաբերութեան մտած է, որուն կը պարտի իր յաջո-
ղութեան գլխաւոր գաղտնիքը: Նախապէս միջնորդի



պէս դեր մը կը կատարեն եղեր, բայց հիմայ ճշմարիտ վաճառականներ են :

8 Մարտ

Ո՛հ, այս տան հոգերը, ժամանակիս մեծագոյն մասը կը կաշկանդեն. երբ մայրս ողջ էր, թռչունի պէս ազատ կ'ապրէի, բայց հիմա, իբրև տանը մեծը ամեն հոգ իմ վրայ ինկած է, Քոյրս գրեթէ անհոգ, դաշնակին և ընթերցումներուն հետ կը պարապի, իսկ ես հազիւ ժամ մը միջոց կ'ունենամ լուրջ ընթերցանութեամբ պարապելու :

Դպրոցէն ելլելէս վերջը օգտակար ուսումնասիրութեամբ պիտի զբաղէի, մօրս անահնկալ մահը և հիւանդութիւնը վրայ հասնելով ցարդ արգելք եղած էին, հիմակ ալ տան գործերը արգելք կ'ըլլան, սակայն անոնք կարգի դնելով կը յուսամ թէ աւելի երկար ժամանակ մը պիտի շահիմ :

Հայրիկս վաղը վիքդոր Հիւկօի ԹՇՈՒԱՌՆԵՐԸ պիտի բերէ, երևելի անձանց գլուխ-գործոցները կարդալու մեծ փափաք ունիմ :

4 Մարտ

Այսօր ԹՇՈՒԱՌՆԵՐԸ կարդալ սկսայ. ի՞նչ սքանչելի գրիչ, կարծես ճարտար նկարիչի մը վրձինն է որ կը պատկերէ դէմքերը ու դէպքերը : Արդեօք ի՞նչ վսեմ սկզբունքներ, ի՞նչ վեհ զգացումներ արտայայտուած են այդ ստուար հատորներուն մէջ :

Մասիսի մէջ, որուն հայրս բաժանորդ է, շատ անգամներ կարդացած եմ այդ գործին վրայ մասնաւոր գովեստներ, չը գիտեմ ո՞ւր տեսած եմ, դայն դարուս

Աւետարանը անուանած էին : Գիշերները ևս մէկ երկու ժամ անով պիտի գրադիմ . աւելի պիտի վերլուծեմք քան թէ հարեւանցի կարգամ , որովհետեւ անոնց մէջ լըրջօրէն ուսումնասիրելու ստուար պաշար մը կայ , վիպական կապերը մերթ ընդ մերթ երկար խորհրդածութիւններով խզուած է . այս պարագան անոր վիպականէն տարբեր հանդամանք մը կ'ընծայէ . աւելի իմաստասիրական և ընկերարանական գործ մըն է՝ քան թէ վէպ մը :

5 Մարտ

Այս գիշեր մեզի հիւր էր Թուրք հաղարապետ Ա . . . Պէյը : Դաշնակից մեծ Տէրութիւններուն Աւուստաբուլի վրայ արշաւած միջոցին հայրս բանակին մէջ թարգման գտնուելով անոր հետ ծանօթացեր է : Խիստ աղնիւ ու բարի գիտութեամբ մըն է . երբէք հայրս մտոցած չ'է :

Պատերազմէն վերջը հայրս շքադրամ մը ստացած է , որ իրեն կը յիշեցնէ երխտասարդութեանը փառաւոր ժամանակը :

6 Մարտ

Իբրեւ նշանաւոր բան , ամբողջ օրս Թուառները կարդալով անցունելա հոս կ'արձանագրեմ . զայն ամբողջ կարդալէս վերջը միայն տպաւորութիւններս եւ գիտողութիւններս պիտի յայտնեմ :

20 Մարտ [*]

Երեկ գիշեր Պաղլար-Պաշիի թատրոնը ընտանեօք

[*] Մարտ 6էն մինչեւ 20 օրագրին մէջ կարեւոր գրուածք մը չը գտնուելուն զանց կ'առնեմ յիշել . յետ այսու նոյն ուղղութեան պիտի հետեւիմ : Ծ . 2 .

ներկայացման մը ներկայ գտնուեցանք: Սաղին նիւթն էր Հաւատք, Յոյս և Սէր. չ'եմ կարծեր թէ այս երեք բաները ունեցողը աշխարհիս վրայ իրականապէս թըշուառ ապրի: Ճշմարտին, բարւոյն և գեղեցկին առաջնորդող կեանքի այդ երեք հիմերը արտաքին ցընցումներու պիտի դիմադրեն, վերջապէս ըստ իս, երջանիկ ապրելու միակ պայմաններ են:

Ապագան ընդարձակ երկիւր մրն է, մարդ չ'է կարող զայն մէկ ուսիւ նով չափել, կ'ըսէ Ամերիկացի հեղինակ մը՝ Տոնալդ Միշէլ: Եւ ես պիտի ըսեմ, ապագան ընդարձակածաւալ ովկիանոս մըն է, այն նաւը որ կանխատեսնուած հաստատունութիւն մը, կամ լաւ նաւապետ մը և կամ դեկաւար մը չ'ունի, փոթորիկներէ ազատելով իր նաւահանգիստը չը պիտի կըրնայ հասնիլ պիտի ընկղմի կամ խորի:

Այսպէս ահա, կեանքի փոթորիկներուն դիմադրելով ուղղակի ապագային դիմելու համար մարդս Հաւատք, Յոյս և Սէր ունենալու է, առանց անոնց բաղդին ու ճակատագրին ձեռքը խաղալիք մը ըլլալով ապերջանիկ պիտի ապրի:

7 Ապրիլ

Երեկ Թեուառներուն վերջին հատորը լրացուցի. որչափ որ տպաւորութիւններս արձանագրել խոստացեր էի, սակայն այսօր ամբողջ գործը վերլուծելով ինքզինքս անկարող կ'զգամ զգացումներս ու տպաւորութիւններս ի գիր առնելու: անոր վեհութեան տակ գրիչս կ'ընկճի: Չը դիտեմ թէ նմանօրինակ գիրք մը աշխարհիս վրայ լոյս տեսած է, որ այնքան ճշգրտօրէն պատկերէ ու գծէ մարդկային թշուառութիւնը և անոր սկզբնական պատճառները. Ո՛հ: Ժան Վալթան

մը վ. Հիւհօ միայն կրնայ ստեղծել. ինչպէս Քրիստոս
մը Աւեսարանը և Մովսէս մը Ասուածաժողովը

Եւ ես այդ վսեմ ու վեհ գրչին տարաւորութեանը
տակ կը խորհիմ թէ աշխարհիս վրայէն երբէք չը պի-
տի վերնայ թշուառութիւնը. բնութեան խորհրդաւոր
ներդաշնակութեան հետեւանքն անհաւասարութիւնն
է, որմէ կը ծնի մարդկային թշուառութիւնը :

Սակայն եթէ ընկերութիւնը բոլորովին չը կրնար
թշուառութիւնը բառնալ, գէթ կրնայ զայն մեղմա-
ցընել. միթէ՞ քիչ ծառայութիւն կը մատուցանէ այդ
դեղը որ մահամերձի մը անտանելի ցաւերը իրեն ըզ-
գացնել չը տար, և միթէ այս նպատակին չ'ե^օն ծա-
ռայեր այն հանրային բիւրաւոր հաստատութիւններն
որք ամեն օր թշուառութեան ահռելի ճիրաններէ հա-
զարաւոր զոհեր կ'ազատեն, և անոր դէմ կը պաշտ-
պանեն գինեմոլը, հիւանդը, յիւստը, ոճրագործը,
ընկեցիկ մանուկը, որբը, աղքատ գործաւորուհին եւ
իւր դիեցիկ մանուկը, ծերը, խուլ-համբը, կոյրը,
պոռնիկը, հրկիզեալը, նաւաբեկեալը, երկրաշարժէ վը-
նասուողը, պատերազմի մէջ վիրաւորը. եւալն :

Քանի թշուառները կարդացի, մարդկութիւնը այն-
քան աւելի սիրել սկսայ :



2 Հոկտեմբեր

Այսօր քոյրս հիւանդացաւ. բժիշկները վտանգա-
ւոր բան մը չ'ունենալը յայտարարեցին, ա՛խ այս
բժիշկներուն խօսքերը եթէ միշտ ճշմարիտ ըլլային . . . ,
իրենց յայտարարութիւնները մտահոգութիւնս երբէք
փարատած չ'են, վասն զի միեւնոյն խօսքերը կրկնե-

ցին միշտ հոգեւոյս մօրս հիւանդութեան ատեն ալ,
մինչեւ որ գերեզման իջաւ . . . :

Ահա այս անորոշութիւնը, բժիշկներուն կեղծիքը,
ինձ եւ հօրս մեծ մտահոգութիւն կը պատճառէ. այ-
սօր եկեղեցի երթալով քրոջս առողջութեանը համար
ջերմօրէն աղօթեցի :

3 Հոկտեմբեր

Քրոջս վիճակը աւելի ծանրացաւ. բժիշկները բան
չ'կայ ըսելով քոֆաւսապ մը ունենալը կը յայտնեն, այս
բժիշկները ի՞նչ տարօրինակ մարդիկ են :

Հայրս գործի շը գնաց, սիրտ շունի աշխատելու,
Ինչպէս որ մօրս, նոյնպէս քրոջս հիւանդապահի պաշ-
տօնը ես կը կատարեմ. բժիշկներուն պատուէրները
ամենայն զգուշութեամբ կը գործադրեմ, որոնց մէջ
ի վուր փրկութեան յոյս մը տեսնել կ'ուզեմ . . . :

10 Հոկտեմբեր

Քրոջս հիւանդութեան իններորդ օրն է. վիճակը
բաւական բարւոքեցաւ, տաքութիւնը եւ զառան-
ցանքը անհետացան. եթէ ճիշդ է բժիշկներուն յայ-
տարարութիւնը. հիւանդութիւնը բոլորովին անցած
կրնայ համարուիլ :

Գիշերները կանոնաւորապէս չը կրնալ քնանալուս
ինքզինքս քիչ մը տկար կ'զգամ. այս գիշեր թերեւ
հանգիստ պիտի կրնամ քնել եւ վերստանալ կորուսեալ
ոյժերս :

23 Հոկտեմբեր

Քոյրս թէ եւ բաւական լաւ է, սակայն դեռ ան-
կողինէն չի կրցաւ ելնել : Ծայրայեղ նիհարութիւն եւ

չոր հազ մը ունի, թէեւ առաջուան պէս այնքան շատ
խուսիս չը թ.քներ :

5 Նոյեմբեր

Քոյրս ինձմէ խնդրած էր որ նոր վէպեր բերել
տալով իրեն կարդամ, բժիշկները կարդալը արգիլեցին
Այսօր սկսայ կարդալ Արլեմուրի Մենակեացր, շատ
հաճոյք զգաց : Վաղը վ. Հիւկօի Պողոսիկը պիտի կար-
դամ, փոքրիկ տետրակ մըն է, բայց անշուշտ իր ծա-
ւալէն անհամեմատ բարձր նիւթ մը կը պարունակէ,
հեղինակին անունը ըսածիս դրաւական մըն է :

28 Նոյեմբեր

Քրոջս վիճակը երթալով կը ծանրանայ, երեւելի
բժիշկներուն խորհրդած ու թիւնները ապարդիւն մնացին
Երէկ գիշեր ծանր տագնապ մը ունենալով քիչ մնաց
որ շնջահեղձ ըլլար. անմիջապէս թաղին բժիշկը կ'ան-
չեցինք :

6 Դեկտեմբեր

Ո՛հ, գրիչս առաջ չ'երթար տխուր իրականութիւնը
գրելու. քրոջս հիւանդութեանը վրայ դրացիներու
միջոցաւ բժիշկներու կարծիքը հարցնելով անբուժելի
հիւանդութիւն մը՝ բոխալս ըլլալը հասկցայ. սոսկալի
ախտ մը, որ անշուշտ ամեն օր հազարաւոր կեանքեր
կ'աճիւնացնէ :

Բժիշկները Գասր գիւղ օդափոխութեան տանիլ
պատուիրեցին :

Հայրս անոր սիրոյն համար ամեն բան զոհել աչքը
առած է, մեր իւսկիւտարի տունը գոցելով Գատը
գիւղ տուն մը պիտի վարձենք :

Գատը գիւղ 2 Յունուար 1876

Հինգ օրէ ի վեր Գատը գիւղ փոխադրուած ենք •
կահ կարասիներէն փոքր մաս մը միայն հետերնիս բե-
րելով Մօսա տուն մը վարձեցինք :

Այսօր քրոջս հազը քիչ մը թեթեւցաւ , բժիշկները
կը շարունակեն , կատարելապէս ապաքինելու մեծ
յոյս կուտան :

5 Յունուար

Երկու օրէ գիւղին բարձր դասին պատկանող հիւ-
րերու այցելութիւնը կը վայելեմ . շատերու հետ ծա-
նօթացայ որոնց անունները միայն լսեր էի : Հայրս գը-
րեթէ չը ճանչցող չը կայ . Ա.զգ . պաշտօններու մէջ
գանուիլը և ձեմարանին հոգաբարձութեան պաշտօնը
զինքը շատերուն ծանօթ կ'ընծայէր , մանաւանդ իր
ալեւոր երկար վայելուչ մօրուքը և լուրջ դէմքը ամե-
նուն պատկառանք և համակրանք կ'ազդէ :

Քոյրս ալ այս այցելութիւններով բաւական իր
ցաւը կը մոռնայ . նորանոր դէմքերու և ազնիւ հոգի-
ներու ծանօթանալով կը մխիթարուի : Վաղը իրեն
կէօթէի Վերթէրը պիտի կարդամ , սիրային վէպերը
չատ կը սիրէ , իւթօփիներով կ'ապրի :

15 Յունուար

Եղբայրներս Գատը գիւղի Ա.զգ . վարժարանը սկը-
սան յաճախել . մէկը գալ տարի շրջանաւարտ պիտի
կրնայ ելլել :

Այսօր ուրախութիւնս շափազանց է , քոյրս սենե-
կին մէջ պտտիլ սկսաւ , ախորժակն ալ բացուած է :

31 Յուևուար

Մեր դրացիներէն Ս . . . եան , Ֆ . . . եան և Ա . . . եան ընտանիքները խիստ ազնիւ են , իրենց յաճախակի այցելութիւններով մեր մխիթարիչներն եղած են . քոյրս եւ ես իրենցմէ շատ կ'ախորժինք :

Երէկուան իւսկիւտարի հրդեհէն մեր տունն ալ իր կահ կարասիով մոխիր դարձեր է , հայրս չափազանց ցաւեցաւ , իսկ ես քրոջս առողջանալէն զգացած ուրախութենէս այդ նիւթական կորուստին վրայ ո'չ կը մտածեմ և ոչ ալ կը ցաւիմ :

2 փետրուար

Այսօր քրոջս հետ մօտաւոր դրացիներու փոխադարձ այցելութեան դացինք . ուրախութիւնս անսահման է :

4 փետրուար

Այսօր քրոջս և մեծ եղբօրս հետ կառքով հեռաւոր բարեկամի մը այցելութեան դացինք : Կ . . . եան բազմաճիւղ ընտանիքին կը պատկանին . մեծ տղանին Պ . Մ . . . , անցեալ տարի Րօպէրթ Բօլէնէն շրջանաւարտ ելած է , տաղանդաւոր եւ համակրելի երիտասարդ մըն է , իւր ստիպմանը վրայ քրոջը Օր . Ս . . . ի հետ դաշնակին վրայ անգլիերէն քարտէն երգ մը զարկինք :

Նաև դաշնակի վրայ առանձինն Home swit homeը երգեցի . Պ . Մ . . . իր հիացումը եւ շնորհակալութիւնը յայանեց :

Շատ համակրեցայ իրեն , և այս տպաւորութեանս տակ տուն մեկնեցանք :

Այս գիշեր Ս . . . եան ընտանիքը ի պատիւ մեզ երեկոյթ մը տուաւ, որուն ներկայ էին գիւղին բարձր դասին պատկանողներէն շատերը . երկսեռ երիտասարդութիւնը դաշնակի, ջութակի և սրինգի ընկերակցութեամբ լաւ նուագախումբ մը կազմեց, որուն ներդաշնակ և հոգեյոյզ թրթռումներուն տակ հաճելի գիշեր մը անցուցինք :

Պ . Մ . . . , ալ ներկայ էր, երկու անգամ զիս պատուեց պարի հրաւիրելով . թռչունի մը պէս թեթ և էր : Իր ընկերութենէն շատ կ'ախորժիմ, մանաւանդ նըրբիմաստ կատակաբանութիւններէն, գրեթէ երեկոյթին հոգին էր :

Այս կիրակի Պ . Մ . . . ի այցելութիւնը վայելեցի . ժամերով երէկ գիշերուան երեկոյթին ներկայ ելողներուն վրայ հեգնական կատակաբանութիւններ ըրաւ . խիստ զուարճախօս երիտասարդ մըն է, քոյրս ալ իրեն շատ կը համակրի :

Օրուան խնդիրներու, բանաստեղծութեան, և Ամերիկեան բարքերուն վրայ խօսելով անմեղօրէն երկար ժամեր անցուցինք :

Երեկոյին դրանք առջեւ կայնած էի . Պ Մ . . . փողոցէն կ'անցնէր . ինձ մօտենալով ձեռքս սեղմեց ու գաղղիերէն լեզուաւ à vous ma pensée : Կարմրեցայ, ինչ կը նշանակէին այս խօսքերը, պարզ սիրային արտայայտութիւններ չ'էի՞ն : Շփոթիլս նշմարելով անմիջապէս խնդաժողիկ (pensé) մը նուիրեց և աւելցուց :

— Այս ծաղիկին գաղղիերէն անունն ալ հայերէնին չափ սիրուն ու խորհրդաւոր է :

Իր կատակարանութիւններուն բաւական վարժէի, բրածին բառախաղութիւն մը ըլլալը զգացի:


Գիշերը ընդերկար իր այս կատակին վրայ մտածելով անքուն անցուցի. չափազանց յուզուած էի. տարօրինակ նոր յուզում մը որ կենացս մէջ երբէք զգացած չէի:

13 Փետրուար

Շարաթ մը կայ որ տեսած չ'եմ Պ. Մ. . . ը, կարծես ինքը հոգւոյս այնմ անհրաժեշտ պէտքերէն մին դարձեր է, գիշեր ցերեկ միշտ անոր վրայ կը մտածեմ, կ'զգամ թէ կը սիրեմ զինքը:

— Սէրը միթէ այսպէ՞ս պիտի սկսէր, իր դալը կանխաւ չը պիտի՞ զգայի:

Այսպէս կը խորհիմ հիմա պատուհանիս առջև նրստած անհուն թաւալ ծովային հորիզոնը դիտելով: Մարմարայի ջինջ ջրերուն մէջ կապոյտ երկնային կամարը կը նշմարեմ, օդը թէև ցուրտ և ձիւնը ամեն ինչ սպիտակացուցած է, ընդհակառակն բնութիւնը հանդարտ է, արեւուն շողշողուն ճառագայթները ջրին հարթ մակերևոյթէն անդրադառնալով հայելիի նման լուսաւոր ցոլքեր կ'արձակեն: Սրտիս կրակէն արտաքին ցուրտը չ'եմ սեպեր, բաց պատուհանիս առջև նստած օրագիրս կը շարունակեմ:



Ս.

20 Փետրուար

Այս գիշեր մեր բարեկամներուն երեկոյթ մը պիտի տանք. քրոջս հետ սենեակները և պարասրահը ճա-

չահաւոր կերպով զարդարելու գրադեցանք, լաւ ընդունելութեան մը համար ամեն բան պատրաստ է :

Երբ կը մտածեմ թէ Մ . . . ալ ներկայ պիտի դըրուի, անսահման ուրախութիւն կ'ըզգամ, կարծես աշխարհ իմա պիտի ըլլայ :

21 փետրուար

Երէկ գիշերուան երեկոյթը յուսացածէս աւելի փայլուն եղաւ . այցելուները շատ դու՛ն մնացին, մանաւանդ Մ . . . ը, կարծես հրեշտակ մըն էր, նրբաճաշակ հագուստը բարձր հասակին շատ վայլած էր : Կիրակի ցերեկին կրկին այցելել խոստացաւ : Աստուած իմ, գիշերները ի՛նչպէս պիտի լուսցնեմ :

22 փետրուար

Ձը գիտեմ թէ ուրիշներուն սէրը ի՞նչպէս կը ծնի . կարճ միջոցի մը մէջ ան ինձմէ բոլոր մտածումներս կորզեց, վայրկենի մը մէջ բոլոր հոգւոյս արեց : Եթէ ազջիկներու համար սիրոյ մէջ նախայարձակութիւնը ամօթ չը սեպուէր, այսօր սիրտս իրեն բանալով զինքը սիրելս պիտի յայտնէի . բայց աւա՛ղ, պատշաճի օրէնքը վրաս կ'իջխէ և սրտիս ձայնը կը մարէ :

Այսօր ուրախութիւնս մեծ է, իրեն այցելութիւնը վայելելով զիս սիրելը կռահեցի :

Առջի օրուան երեկոյթին մէջ քոյրս պաղ առնելով այսօր քիչ մը տկար է, բժիշկը կատարեալ հանգիստ պատուիրեց :

Քրոջս հիւանդութեան վրայ անհանգիստ եմ, անպիտան չոր հազը դարձեալ սկսաւ . գիշերները ամբողջ կուրծքը պաղ քրտինք մը կը պատէ : Վազը երեք երեւելի բժիշկներ պիտի խորհրդակցին . հայրս այս հիւանդութիւններուն և հրդէհներուն պատճառաւ դըրեթ է փճացաւ . իր 12 ոսկի ամսականը ներկայ ծախսերուն չը բաւեր :

3 Մարտ

Երեւելի բժիշկներուն խորհրդակցութիւններն ալ ապարդիւն մնացին , քրոջս վիճակը միշտ ծանրանալու վրայ է : Պ . Մ . . . է շնորհակալ եմ , այս նեղ օրերուս մէջ միակ մխիթարիչս եղած է , Խնդրեցի որ յաճախ այցելէ , իրմով շատ երջանիկ պիտի ըլլայի եթէ քրոջս հիւանդութիւնը չպատահէր , սիրտս կտտրած է : Թէև ինքը համարձակեցաւ վարպետութեամբ մը զիս սիրելն յայտնել , սակայն ես փոխարինելու համարձակութիւնը չունեցայ : Սիրոյ մէջ անկասկած զիս շատ ցուրտ և անտարբեր դտաւ . այս անտարբերութիւնը աւելի վշտահար վիճակիս հետեւանքն էր քան թէ սրտիս . . . , և արդէն իր մեկնելէն վերջը ըրածիս վրայ շատ զղջացի :

7 Մարտ

Այսօր կենացս էն հաճելի օրն է , սիրտս իրեն բացի , ուրախութենէն պիտի խենդենար :

— Երկու շաբաթ է ի վեր քու վրայ մտածելով կը չարչարուէի , ըսաւ ձեռքս բռնելով , առանց քեզ տեսնելու անցուցած վայրկեաններս կենացս ամենատա-

ժանելի օրերը կազմեցին, երբ մօտդ ըլլայի անհուն գոհունակութիւն մը կ'զգայի . . . :

— Կը ցաւիմ որ երէկ սրտիս նեղութենէն քեզ նկատմամբ անտարբեր դանուեցայ, պատասխանեցի :

— Պատճառը աւելի մաքիդ վերագրեցի քան թէ սրտիդ :

— Զղջացի, բայց ուշ էր :

— Սէրդ արդէն նշմարեր էի, բայց երէկ միայն կրցի սիրտս քեզ բանալ որուն դժբաղդաբար չը պատասխանեցիր :

— Շիտակը նոյն միջոցին քրոջս ծանր վիճակը ուղեղս խանգարած էր. միեւնոյն ցրտութիւնը, առաջին անգամ խնդածաղիկ մը նուիրած միջոցիդ ևս ցոյց տուի և անոր վրայ զքեզ աւելի ջերմօրէն սիրել սկսայ : Միեւնոյն անկեղծ սէրը այսօր ինձ նուիրելուդ ինքզինքս ամենէն բարեբաղդը կը համարիմ :

— Հապա ես^o . . . , քեզ նման հրեշտակ մը ունենալուս երջանիկ եմ, եթէ կը հաճիս լուսանկարնիս փոխանակենք. ահաւասիկ իմս ըսելով մինեօն մը ներկայացուց :

— Շնորհակալ եմ, մինեօն լուսանկար չունենալուս շատ կը ցաւիմ, բայց կը խօստանամ հօրմէս գաղտնի հանել տալով հօտ մը նուիրել քեզ :

Լուսանկարը միտալիօնիս մէջ դնելով իրեն ձեռագործ թաշկինակ մը նուիրեցի :

Մինեօն լուսանկարէս Մ. Ի. հատ մը նուիրեցի, համբուրելով գրպանատետրին մէջ դրաւ :

— Կենացս մինչեւ վերջին վայրկեանը զքեզ պաշ-

տելով հետդ ապրիլ կ'ուխտեմ, մեր տնեցիք ալ կը համակրին քեզ, ամուսնանալով երջանիկ միութիւն մը պիտի կազմենք, ո՛հ, այդ երանեալ օրը ե՞րբ պիտի գայ որ դքեզ համարձակ վայելեմ, ըսաւ ձեռքս ձեռացը մէջ առնելով:

Սրտիս յուզումէն ձեռքս կը դողար, վրաս նեղիչ տազնապ մը գալով խկոյն նուազեցայ:

Քրոջս վիճակը յուսահատական է:

25 Մարտ

Այսօր կենացս ամենէն աւելի տխուր օրերէն մին է, սուգի ու լացի սեւ օր մը, ո՛հ, քանի որ մահ կայ, կեանքը ինձ խաղալիք մը կ'երեւայ, աննպատակ չարչարանք մը:

Պաշտելի հոգեհատորս, սիրելի քոյրս երէկ գիշեր մեռաւ, այսօր յուղարկաւ որութեան տխուր հանդէսը կատարեցինք:

Մահուան եւ սիրոյ երկու ծայրայեղ և հակառակ յուզումներու մէջ կը տառապիմ, վիճակս արգահատելի է:

Ջղային տազնապներս վերսկսան, չափազանց նիհարցայ, կ'երևայ թէ այսչափ ծանր վիշտերու չը պիտի կրնամ տոկալ . . . :

Եւ կը խորհիմ թէ ի՞նչ է կեանքն ու իր նպատակը, ո՛հ, եթէ ոչ հեծկլտանաց շարունակութիւն մը . . . Վայրկենական հաճոյքի մը համար կարժէ՞ միթէ տարիներով անոր տաժանելի բեռը կրել . . . :

Այս սև օրերը կեանքիս դարուներ խամրեցին, մօրս մահը, քրոջս մահը իրարու յաջորդելով ժամանակէն առաջ զիս ծերացուցին:

Ո՛հ, միւսնոյն տարուան մէջ երկու սրտահատորներս ալ յաւիտենականութեան անյատակ անդունդը գլորեցան, անձանօթ երկիր, ուրկէ ճամբորդի մը վերադարձը երբէք տեսնուած չ'է. (*)

26 Մարտ

Հօրս զգացած վիշտը շատ խորին է, մէկ տարուան մէջ բոլորովին ծերացաւ, դրամական անձուկ վիճակն ալ աւելորդ հոգ մը:

Թէ ծախսերն թեթեւցնելու և թէ քրոջս մահուան տխուր պարագաները մոռնալու համար տուներնիս փոխել հարկ եղաւ. մէկ երկու շաբաթ վերջը Մէօնիւրսարի կողմերը տուն մը պիտի վարձենք:

Խեղճ Մ . . . ինքն ալ ինձի հետ սուգի մէջ է, երեսս նայելու համարձակութիւն չ'ունի: Այս անմիտ թար վիճակիս ու առանձնութեանս մէջ կարծես ալ աւելի զինքը կը փնտռեմ:

Սակայն քրոջս նուիրական յիշատակը սրտիս հասանքին հետեւելէ զիս կ'արգիլէ, աւելի կ'ընտրեմ օրերով սուգի և տխրութեան մէջ թաղուիլ, քան թէ անոր խնկելի յիշատակը պղծել . . . :

13 Ապրիլ

Հայրս այսօր իր տօմարակալի պաշտօնին հրաժարագիր տուաւ ամսականին անբաւականութիւնը առարկելով, և երեք ոսկիի յաւելում մը խնդրելով:

Առանց դիտողութեան հրաժարականը ընդունե-

(*) The undiscover'd country n'hore courn, No traveller returns.
« HAMLET »

ցին և իր տեղը աւելի նուազ ամսականաւ նոր հաս-
նող սերունդէն մէկը դրին :

Շիտակը այդ համբաւաւոր տան հօրս նկատմամբ
հետեւած ընթացքը պարսաւելի է . տասն և հինգ
տարիէն աւելի է որ իրենց քով խղճի մտօք եւ կա-
տարեալ ուղղամտութեամբ կը պաշտօնավարէր . այս-
պիսի վաղեմի աշխատաւոր մը փոխան վարձատրելու ,
իր վերջին անկեալ օրերուն մէջ երեք ոսկիի յաւելումի
մը համար մէկէն ի մէկ ճամբելը խղճի բացակայու-
թիւն կը նշանակէ : Եւրոպական նմանօրինակ հաս-
տատութիւններ իրենց այս կարգի պաշտօնեայներուն
ամսականները տարուէ տարի կ'աւելցնեն եւ ապա-
գանին կ'ապահովցնեն նիւթական պարգեւներ և կամ
հանգստեան թոշակներ յատկացնելով :

Այդ վաճառատունը հօրս ամսականին վրայ երեք
ոսկիի յաւելում մը ընելով ոչինչ կը կորսնցունէր , մա-
նաւանդ հօրս տասն եւ հինգ տարուան մատուցած
ծառայութեան փոխարէն այդ յաւելումը մեծ բան
մը չ'էր :

Բազդին անողոք հարուածներովն իր խնայողու-
թեամբը հաւաքած հարստութիւնը կորսնցնելէն վերջը ,
հօրս նման ուղղամիտ եւ փորձառու պաշտօնեայի մը
չ'օգնելը , աշխարհիս վրայ գործուած ամենէն մեծ ա-
պերախտութիւնն է . . . :


Մեր մէջ ե՞րբ պիտի ծնին քափառական Հրէաիւն
մէջ յիշուած գործարանատէրին նման տիպար ու բա-
րեօիրտ վաճառականներ . . . :

25 Ապրիլ

Հայրս հին պաշտօնը ձգելէն ի վեր զանազան վաճառատուններու մէջ այցելու տօմարակալի պաշտօնը վարելով նախկին վիճակէն աւելի գոհ է :

Մեծ եղբայրս այսօր Փարիզ մեկնեցաւ Բօն է Եօսէ վարժարանը մտնելու համար . բաւական խելացի ու ճարպիկ է , իր աշխատասիրութեամբը կը յուսամ թէ ապագային լաւ դիրք մը պիտի կրնայ գրաւել որուն ի սրտէ յաջողութիւն կը մտադրեմ : Բայց հօրս այս անկեալ վիճակին մէջ մեծ բեռ մը պիտի ըլլայ . հայրըս որչափ որ իր նախկին նիւթական կարողութիւնը չ'ունի սակայն և այնպէս մեծ բացած դուռն ալ պըղտիկցնել չ'ուզեր . գիշեր ցերեկ չարաչար աշխատելով իր անկեալ վիճակը ուրիշներէն ծածկել կը ջանայ և իր նախկին արտաքին փայլը անփոփոխ կը պահէ :

Դժբաղդ հայրիկ , իր ծերութեան վերջին օրերուն մէջ միթէ արժանի է՞ր այս զրկանքներուն և սիրտհատնումներուն :



2.

4 Մայիս

Երէկ ամբողջ օրս Լամարդինի Լէ Ֆուայէն կարգալով անցուցի . այսօր ինքզինքս յոգնած կ'զգամ , ամբողջ ջղային դրութիւնս գրգռուած է , օդ առնելու և բնութիւնը վայելելու մեծ պէտք ունիմ :

Գարնան էն զուարթ եւ ախորժելի օրերէն մին է . բնութիւնը իր ամբողջ գանձը բացած է , երփներանդ ծաղիկներ սրտերնին բացած սէր կը բուրեն . դաշտերուն , մարգերուն , պուրակներուն միջէն սահող քաղցր հողմիկը սէր կը բզկայ :

Մարմարան հայելիի նման կը փայլի ու կը ծփայ,
թեթեւաչարժ նաւահները իրենց հեղասահ ընթաց-
քով հանդարտիկ ջրերը ձեղքելով կ'անցնին ու կը
դառնան ետեւնին փրփրալից արծաթափայլ ուղի մը
ձգելով: Ծովափը եւ պարտէզները երկսեռ բազմու-
թեամբ լի է, սիրատենջ զոյգեր ծաղիկներով զար-
դարուած կը ձեմեն իրարու սիրայոյզ ժպտաներ փո-
խանակելով . . . :

Իսկ ես, սգաւոր ըլլալուս բնութեան բարիքները
վայելելէ կը զրկուիմ, ընկերութիւնը անողոք է, վրաս
չարախօսել տալ չեմ ուզեր, պատուհանիս առջեւ
նստած բնութեան զարթնումը դիտելով կը բաւակա-
նանամ . . . :

Պ. Մ . . . երեկոյին ընկերի մը հետ մեր տան առ-
ջեւէն անցնելով յարգալից կերպով մը զիս բարեւեց .
ժամանակէ մը ի վեր զինքը տեսած չ'ըլլալով կարօ-
տովն եւ սիրովը կը տոջորէի. մանաւանդ ինչ մեղքս
պահեմ. կը կասկածիմ, չ'ըլլայ թէ ուրիշ մը իր սըր-
տին տիրէ, կասկածիս անտեղի ըլլալը թէև կ'զգամ,
սակայն ձեռքս չ'է, ինքնին կը ծնի և տեղի կուտայ
նախանձի մը :

Գ Յունիս

Պ. Մ . . . այս գիշեր ընտանեօք մեղի էր: Միջոց
մը գտնալով ինձ ըսաւ :

— Սուգդ ուրիշին պահէ, համբերութիւնս հա-
տաւ, սիրովդ պիտի խենդենամ, թոյլ տուր ինձ սրբ-
տիս կրակը մարելու համար աչերէդ համբոյր մը քաղեմ:

Չը մերժեցի, յետոյ մազերէս փնջիկ մը ուղեց,
այն ալ նուիրեցի:

Երկար ատեն մեր ապագայ միութեան վրայ խօսեցանք . խոստացաւ զիս երջանիկ ընել : Իսկ ես , ո՛հ , բոլոր հոգիս պիտի զոհեմ իր երջանկութեանը համար . պահաստան հրեշտակի մը նման վրան պիտի հսկեմ :

Կասկածներս իրեն յայտնեցի :

— Կը հաւատա՞ս , ըսաւ , որ զքեզ ունենալէս վեջը ուրիշ մը սիրեմ , ոչ , այդպէս մտածելդ բոլորովին անգթութիւն է . . . :

Այս բացատրութենէն շատ գոհ եմ :

Բոլորովին վստահեցայ :

16 Յուլիս :

Ա . . . եան ընտանիքին կից է մեր տունն , հետեաբար անոնց հետ սերտ մտերմութիւն մը ունենալնիս բնական է : Տասն և չորս տարեկան գեղանի աղջիկ մը ունին որուն դաշնակի մասնաւոր դաս տալ յանձն առի . պարապ ատեններուս իրեն պիտի դասախօսեմ , խնդրեցի որ վարձք տալերնին ուրիշի չը յայտնեն :

30 Յուլիս

Հայրիկս օժիտիս համար ամսական գումար մը յատկացուցած էր , դասախօսութեանս իբր վարձք ստացածս ալ միւլենոյն նպատակի պիտի յատկացնեմ . արդէն սկսայ մաս մաս ձեռքովս պատրաստել :

20 Օգոստոս

Դաշնակի աշակերտուհիս շատ ուշիմ և փութաջան է . գերմանական մէթոտով կը դասախօսեմ . եթէ այսպէս շարունակէ՝ գալ տարի դժուարին կտորներ բաւական յաջողութեամբ պիտի կրնայ ամել :

Հայրը հարուստ քլլալով հարսանեկան օժիտը այժմէն պատրաստած է . թէեւ միջակ կրթութիւն մը տացած է , սակայն իր խոհեմ բնաւորութիւնը եւ հոգեգրաւ գեղեցկութիւնը , մանաւանդ հազար ոսկի դրամօժիտը , ամուսնանալ փափաքող երիտասարդներու համար լաւագոյն ընտրելի մը հանդամանքը կ'ընծայեն , շատակը զայն առնուլ երիտասարդը շխաբու իր :

29 Օգոստոս

Այս գիշեր Ս . . . եաններուն էինք , իրենց ազգականներէն Տէր և Տիկին Փ . . . եան Պէյքօղէն հիւր եկած էին , գիւղէն ալ Մ . . . եան և Կ . . . եան ընտանիքները ներկայ էին :

Ժամի մը շափ դաշնակով դբօսնելէ վելջը թղթախաղի սեղանը մէջ բերին : Այս կարգի երեկոյթներու մէջ թուղթ խաղալը ջիղերուս կը դպի . իմաստալից խօսակցութիւններով ժամանակ անցնելը միթէ աւելի օգտակար չէ^օ , մանաւանդ ասանկ զարգացած ընկերութեան մը մէջ , որ գիտական , դրականական , գեղարուեստական և ընկերաբանական խնդիրներու վրայ խօսելու և գաղափար յայտնելու համար մտաւորական բաւական լաւ պաշար ունի :

Թղթախաղի սեղանին շուրջը բոլորուողներն գիւղին բարձր դասին պատկանող ծանօթ երիտասարդ և երիտասարդուհիներն էին :

Ձիս ալ շատ ստիպեցին , չը մասնակցեցայ . Պէյքօղէն եկող մանկամարդ հարսին հետ անկիւն մը քաշուելով՝ քիչ մը օրուան խնդիրներուն և քիչ մըն ալ ամուսնական կեանքին վրայ խօսեցանք :

Յետոյ իրար խառնեցինք բոլոր ծանօթ և թէ նոր

գրիչները . երեք չորս ժամ խօսելու նիւթ հայթայթ ե-
ցին Սօճասարեան , Մամուրեան , Իւթիւճեան , Չիլին-
կիրեան , Տէտէեան , Պալթաղարեան , Տօք . Ռուսին-
եան , Տօք . Թիրեաքեան , Տօք . Մէղպուրեան , Տօք .
Շիչմանեան , Օտեան , Պէրպէրեան , Տէմիրճիպաշեան ,
Արմիարեան , Գուրգէն , Փանոսեան և այլն անուները
ու իրենց գործերը :

Մենք մինչդեռ անկիւնը այս շահագրգիռ և օգտա-
ւէտ խօսակցութիւններով իրարու գաղափար կը փո-
խանակէինք , անոնք անդին շուկայի յատուկ զգուելի
և կնոջ մը բերնին անվայել խօսքերով դողութեան մը
կամ սխալ խաղալու մը վրայ կը պօռային ու կը ճըշ-
ւըռտէին , արժանապատուութեան զգացումնին խաղի
յուզումներուն մէջ կորսնցնելով՝ եթէ չեմ սխալիր՝
երբեմն հայհոյութիւններ ալ կը լսէի :

22 Հոկտեմբեր

Պ . Մ . . . այսօր կարճ նամակով մը ինձ նուիրեց ու-
կեղօծ փառաւոր կազմով գաղղիերէն Ռօմէօ եւ Փիւլիէթ
գեղեցկահիւս վէպը : Կողքին վրայ այսպէս գրած էր .

Միեւնոյն սէրը կը բաղձայ նաեւ զձեզ յաւէ՛ս պառ-
տող ապագայ խօսեցեալդ : Մ . . .

Նամակն ալ այսպէս կը վերջանար :

« Սիրոյ սաստիութիւնը բերնով չը կրնալ հաղոր-
« դելուս , սախալուեցայ գրիչս սրախ թարգման կանդ-
« նել , նոյնը նաև քեզմէ . կ'սպասեմ , ցանկալի երկ-
« տալիկդ համբոյրներովս պիտի ծածկեմ և միշտ սըր-
« տիս վրայ պիտի պահեմ . . . : »

6 Նոյեմբեր

Գաշնակի աշակերտուհիս սկսաւ առանձինն բաւա-
կան յաջողակութեամբ դժուար կտորներ զարնել,
զինքը շատ կը սիրեմ, եթէ ձայնը յարմար ըլլար, մը-
տադիր էի Միւզիք-Վօֆալ ևս դաս տալ, դժբաղդա-
բար ձայնը անյարմար է,

Պ. Մ . . . երէկ գիշեր հիւանդացեր է. ստոյգ եւ
կատարեալ յուր մը չ'առնելուս շատ անհանգիստ եմ.
մտադիր եմ վաղը եղբայրս զրկելով վիճակը հասկնալ :

7 Նոյեմբեր

Խեղճ Մ . . . իս վիճակը ինձ մտատանջութիւն կը պատ-
ճառէ. բժիշկները քի՞՞ք կը կարծեն եղեր: Այսօր իրեն
համար աղօթեցի. Տէրը երիտասարդութեանը ողորմի :

10 Նոյեմբեր

Պ. Մ . . . ի քի՞՞ք ըլլալը բժիշկները հաստատեր են,
շատ կը վախնամ: Գիշեր ցերեկ մտքէս երբէք չ'եւլեր,
զգացած ցաւս ու սրտնեղութիւնս չ'եմ կրնար նկա-
րագրել. գիշերները գրեթէ միշտ իր վրայ մտածելով
անքուն կ'անցնեմ:

19 Նոյեմբեր

Եղբայրս Պ. Մ . . . ի վիճակը շատ ծանր նկարագրեց.
Աստուած իմ, պիտի խենդենամ, ա՛խ, ուր էր թէ
քովը ըլլայի և ձեռքովս խնամէի զինքը: Բժիշկները
դրսէն այցելութիւններն արգիլեր են.

28 Նոյեմբեր

Այս երեկոյ հայրիկս Պ. Մ. . . ի ապաքինման լուրը բերելով աշխարհ իմս եղաւ . ուրախութենէս պիտի խենդենամ . արդեօք ե՞րբ պիտի տեսնեմ իր բարձր հասակն եւ անուշ աչերը :

15 Դեկտեմբեր

Աստուած իմ . Պ . Մ . . . այնչափ փոխուեր է , նիհարութենէն աչերը փոսը իջեր և խնձորիկները դուրս ցցուեր են : Այսօրուան այցելութենէս շատ դոհ մընաց , իսկ ես բոլորովին յուզեալ տուն դարձայ :

20 Դեկտեմբեր

Ջղային տագնապներս բաւական մեղմացան . վաղը անկողինէս պիտի ելլեմ :

1 Յունուար 1877


Անցեալ տարի Կաղանդին ուրախ էի , նոր Գատըգիւղ եկած էինք . գիւղին օղը սղբացեալ քրոջս օգնելով ապաքինմանը մեծ յոյս ունէի :

Այլ աւա՛ղ , 1876 տարին ինձ համար սուգի եւ արտասուաց տարի մը եղաւ , ինչպէս նաև իր նախորդըն . իցի՛ւ թէ այս տարին շնորհաւոր ըլլար ու դադրէր արտասուքներս :

Բոլոր բարեկամներուս և համայն մարդկութեան երջանիկ ու բարեբաստիկ նոր տարի մը կը մաղթեմ :

Այսօր նոր տարւոյ առթիւ ազգականներէս ու բարեկամներէս իբր նուէր ստացայ Տոտէի Փազը , Բոլ Ֆէվալի Կավոքը , Մոնսըլէի Մոսցուածները եւ Արևա-

մարհետայները, և Մաքսիմ տիւ Գանի ԱՆՃՆ ասպանի մը Յիշատակարանը ու բազմաթիւ խորհրդաւոր ծաղկանկարներ, Քրիստոսներ եւ այլն:



է.

5 փետրուար

Պ. Մ... առաջին անգամ ըլլալով այսօր տունէն դուրս ելաւ, պատուհանէն դալը տեսնելով ուրախութեամբ դուռը վազեցի. իր նախկին առողջութիւնը վերստացեր է:

Զիս տեսնելուն պէս առաջին շարժումը անոյշ ժըպիտ մը եղաւ, մին այն սիրատարի ժպիտներէն որ մարդ կ'զգլխեն:

— Առաջին այցելութիւնս քեզ կու տամ, ըսաւ ձեռքըս սեղմելով, անշուշտ սրտիս մէջ առաջին տեղը դուն բռնած ես:

— Շատ ուրախ եմ, պատասխանեցի, ոչ միայն առաջին այցելութիւնդ ինձ տալուդ, այլ ցանկալի առողջութիւնդ վերստանալուդ համար:

— Զառանցանքներուս մէջ միշտ քեզմով զբաղելուս, մայրս զարմանքը կը յայտնէ. մինեօն լուսանըկարդ ժամացոյցի շղթայիս միտալիօնին մէջ տեսեր է, բայց ինձի բան մը չ'ըսաւ:

— Հապա ե'ս, վիճակդ մտաբերելով օրերով անքուն անցուցի:

— Կը հաւատամ, և այդ գիտնալովս աւելի հոգ կ'ընէի, ինձմով ո՞ր աստիճան անհանգիստ ըլլալդ կը զգայի, բայց փառք Աստուծոյ, այսօր զքեզ ողջագործելու բարեբաղդութիւնն ունեցայ:

Երկար գրկախառնութենէ մը վերջը մեկնեցաւ , սիրտս , կեանքս ու ամեն բան ինձմէ կորզելով իրեն հետ տարաւ :

24 Մարտ

Այսօր սիրելի քրոջս մահուան տարին բողոքեցաւ . անցեալ տարի ճիշդ այսօր հոգին աւանդեց . ո՛հ , այդ օրը ի՞նչ սեւ օր էր , այդպիսի օրեր երթան ու չ'գան :

Ազգականներս ու բարեկամուհիներս այսօր զիս բաղնիք տանելով սուգէ հանեցին . տարի մը ամբողջ քրոջս յիշատակը սեւեր հագնելով պահեցի :

Միայն իր նուիրական յիշատակը սրտիս փոթորիկներուն հեռեւելով պղծեցի : Տէրը մեզք չը համարէ , Յիշատակը օրհնեալ ըլլայ :

25 Մարտ

Գաշնակի աշակերտուհիս սուգէ ելլելուն համար ինձ թաշապատ և փղոսկրազարդ լուսանկարի ալպօմ մը նուիրեց . խիստ հաշակաւոր արուեստական գործ մըն է . որուն առաջին բաժանման մէջ զետեղած է իրենց ընտանեկան համախումբ մեծ լուսանկարը :

15 Մայիս

Երեկոյին աշակերտուհիս եւ եղբօրս հետ Մէօ-հիւրսարի սլարտէզը շրջագայեցինք . ծովը , երկինքը ու մերկ բնութիւնը դիտելով շէի կշտանար :

Պ . Մ . . . պատահելով մեզ բարեւեց , փոխադարձ զինքը բարեւեցինք . աշակերտուհիս մէկէն ի մէկ կար-

մըրեցաւ և խօսակցութիւնը խակոյն ընդհատեց, դէմ-
քին այլակերպութիւնը սրտին յուզումը կը մատնէր :
Իր այս տարօրինակ և առանց պատճառի յուզուիլը
ինձ զարմանք պատճառեց :

— Ի՞նչ եղար, ըսի :

— Ո՛հ, ոչինչ, բան մը չ'ուենիմ, պատասխանեց
վրդովեալ ձայնով մը :

— Չէ, անշուշտ բան մը ուենիս և ինձմէ կը ծած-
կես ըսի :

— Վերջը կը պատմեմ, ըսաւ գլխովն եղբայրս
ցուցնելով և ստորին շրթ ունքը խածնելով. և այս կը
նշանակէր — եղբայրդ չ'եմ ուզեր որ լսէ, առանձին
ըլլամք կը պատմեմ :

Աշակերտուհիս այս զգուշական վարմունքը զար-
մանքէ աւելի հետաքրքրութիւնս շարժեց :

Այս դէպքին վրայ առանց ակնարկութիւն մը ը-
նելու ժամերով պտտեցանք :

Գիշեր քունս չը տարաւ, կասկած մը միտքս կը
չարշրկէր. երբեմն կասկածիս անտեղի եւ անհեթեթ
ըլլալը կզգայի, կ'ուզէի մտքէս վանել, յամառաբար
նորէն կը ներկայանար :

16 Մայիս

Այսօր դասախօսելու համար աշակերտուհիս հետ
առանձինն մնալով, երէկուան դէպքին վրայ խօսք
բացի ըսելով :

— Երեկուան յուզումդ անշուշտ շատ մեծ գաղտնի
պատճառ մը ունենալու է :

— Այո՛ ազնիւ բարեկամուհիս, ըսաւ, սրտի խոս-

տովանանք մը՝ որ ձեզ նման մտերիմ ու սրտակից բարեկամուհի մը միայն կրնամ հաղորդել :

Կասկածս վերստին ծնաւ . բան մը կռահել չը տալու համար անտարբեր ձեւանալով ըսի :

— Հետաքրքրութեամբ պիտի լսեմ :

— Թէեւ շատոնց կ'ուզէի խօսքը ձեզ բանալ , սակայն կը քաշուէի . դիպուածը մասամբ ձեզ գիտցուց գաղտնիքը :

— Ես բան մը չ'եմ գիտեր , պատասխանեցի , յուզումս և անհամբերութիւնս ծածկել ջանալով :

— Կը կարծէի թէ քիչ մը հասկցած էք , լաւ ուրեմն , ինձ կը թուի թէ ձեզ պատմելովս , սրտիս վերայէն մեծ բեռ մը պիտի վերնայ , չը գիտեմ ինչ զարմանալի զգացում մըն է այն որ զիս կը մղէ շատերէն գաղտնի պահել ուղած մէկ բանս քեզ յայտնել :

— Է՛հ , բնական է այդ , մարդ չըկայ որ գաղտնիք մը այն ալ սրտի գաղտնիք մը ունենայ եւ ուրիշի մը հաղորդել չ'ուզէ :

— Կարծեմ թէ մտերիմ ու սրտակից բարեկամուհի մը ունենալը այս պարագային մեծ բարերազդութիւն մըն է :

— Անտարակոյս , պատասխանեցի :

Համբերութիւնս կ'սպառէր :

Սորին հառաչ մը արձակելով ըսաւ :

— Ա. խ , սիրելիս , կը սիրեմ զինքը , յիմարի մը պէս կը սիրեմ :

— Ո՞վ , հարցուցի զարմացմամբ :

— Պ . Մ . . . ը , պատասխանեց արտասուեաց երկու կաթիլներ այտերէն վար հոսեցնելով :

Նոյն պահուն կարծես վրաս կուծ մը պալ ջուր թափեցին . ո՛հ , այդ բառը , այդ անո՛ւնը . . . ելեք-

տրական ցնցումի նման վայրկենապէս ամբողջ մարմինս
չըջան ըրաւ :

Վրաս ջղաշին սարսուռ մը գալով նուազեցայ :

Քիչ մը վերջը նուազումս անցաւ :

Սշակերտուհիս գունաթափուեր էր :

— Ձիս շատ վախցուցիք, ինչո՞ւ այդպէս եղաք,
հարցուց սրտադողով մը :

Ինքզինքս ժողուելով պատասխանեցի :

— Այս օրերս ջիւերս շատ գրգռուած են, մերթ-
ընդ-մերթ այսպիսի տագնապներ կ'ուենենամ, տուճէն
բաւական օգտուած էի, երէկ արդէն ինքզինքս տկար
կ'զգայի, այսօր հետեւանքը կրեցի :

Հսածիս համոզուեցաւ, տուճ ընելս դիտեր և կան-
խաւ պատճառը հարցուցած էր :

Ներքին յուզումս իրմէ ծածկելով ամեն բան իմա-
նալ ուզեցի :

Հսածիս հաւատալս չ'էր դար :

Կատկածս հաստատելու համար հարցուցի :

— Այն ալ քեզ կը սիրէ՞ :

— Խենդի պէս :

— Ե՞րբ սկսաք զիրար սիրել :

— Տասը ամիս եղաւ :

— Ծիշդ տասը ամիս է որ զիրար սիրել սկսած էք :
ըսի զարմանքս չը կրնալով ծածկել :

— Այո՛, տասը ամիս առաջ իրարու բացուեցանք :
ըսաւ և խանդավառ ժպիտով մը աւելցուց, ժպիտ մը
որ թունալից նետի մը պէս սրտիս մինչ խորերը մըխ-
ուեցաւ . . . :

— Ինչպէ՛ս, ընտրութիւնս լաւ չ'է՞, շատ գեղե-
ցիկ երիտասարդ մըն է :

Ձը պատասխանեցի, և ի՞նչպէս կրնայի պատաս-
խանել, զինքը հաստատելու համար բոլոր սէրս, ամ-

բողջ կեանքս ոտնակոխելու էի :

Լռութիւնս զգացնել չը տալու և կասկածս աւելի հաստատելու համար անմիջապէս հարցուցի :

— Իրարու յիշատակ մը, սիրոյ կապ մը նուիրած էք :

— Անշո՛ւշտ, տեսէք սա լուսանկարը, կը ճանչնա՞ք զինքը : . . .

Վերջին խօսքը կատակարար արտասանելով ոսկի միսալիօն մը ներկայացուց :

Ա՛հ, Աստուած իմ, տեսածս արդեօք երազ մը չ'է՞ . . . , ինձ նուիրած լուսանկարին նման իր միևեօն լուսանկարն է :

Ա՛լ չը կրցի ինքզինքս զսպել, ինձ տուածն ալ իրեն ցուցնելով ըսի :

— Դուն ալ այս կը ճանչնա՞ս :

Երբ միսալիօնիս մէջի միևեօն լուսանկարը տեսաւ, սոսկալի ճիչ մը բառնալով գոչեց :

— Աստուած իմ . . . :

Եւ սկսայ մի առ մի իրեն պատմել, իմ ու Մ . . . ի միջեւ անցած բոլոր սիրային դէպքերը :

Զարմացաւ, բայց տակաւին չ'էր հաւատար :

Պատահամբ իր վերջին նամակներէն մին քովս էր . անմիջապէս յիշելով իրեն ցուցուցի :

— Այս գիրը կը ճանչնա՞ս . . . :

— Ո՛հ, ճիշդ անոր գիրն է, գոչեց դէմքը մարմարիոնի նման ճերմկնալով :

Եւ աճապարանօք գրասեղանին դարակէն նամակ մը հանելով ըսաւ :

— Մի եւ նոյն յուզումները, մի եւ նոյն սէրը արտայայտող իր մէկ գիրն է այս :


Արգարեւ մի և նոյն սէրը մի և նոյն ժամանակ աշակերտուհիս ալ ուխտած է :

Ալ մեր մէջ պաշտօնիք չը մնաց . վասին բոլոր կեղ-
ծիքները , բոլոր խորամանկութիւնները պարզուեցաւ :

Անշուշտ մեր երկուքէն մին ճշմարտապէս կը սիրէ ,
և ո՞վ է այն , ե՞ս թէ աշակերտուհիս . . . : Բայց ինչո՞ւ
անուշտ կ'ըսեմ , չը կրնա՞ր ըլլալ որ անոր նման ցած-
հոգի և կեղծաւոր մարդը և ո՞չ մէկերնիս ալ ճշմար-
տապէս չը սիրէ . . . : այս վերջին ենթադրութիւնս ա-
ւելի հաւանական , աւելի ճշմարտանման է . . . :

Այնքան երկիւղածութեամբ , այնքան եռանդով
պաշտած սէրս , այս տեսարանէն վերջը ծայրայեղ ա-
տելութեան փոխուեցաւ . վրէժ , սոսկալի վրէժ մը
լուծել կուզեմ : Նոյն ատելութիւնը ունեցաւ նաև ու-
շակերտուհիս :

Աշակերտուհիս հետ երկար լարակ խորհելէ վերջը
որոշեցինք իրեն մէյմէկ նամակ գրելով վաղուան հա-
մար Մէօհիւրսարի պարտէզը ժամադրութիւն մը ընել :
Այս պարտէզը առաւօտները , մանաւանդ լուր օրեր
բոլորովին ամայի ըլլալուն մեր նախատակին ամենէն
լաւ կը յարմարէր :



Ը.

17 Մայիս

Երէկ գիշեր սրտիս նեղութենէն աչքս քուն չը մը-
տաւ :

Այս առաւօտ աշակերտուհիս երթալով որոշած
նամակնիս գրեցինք . միայն իմ ստորագրելս յարմար
դատեցի , որպէս զի կասկածի տեղի չ'տամ :

Ժամադրութիւնը ժամը երկուքին որոշած էի :

Ժամը մէկին մեր ծնողներէն գաղտնի մեկնեցանք
աշակերտութիւն անկիւն մը ծառին ետին պահուրտե-
ցաւ :

Իսկ ես ծառին տակ սեղանի մը առջեւ նստայ ,
սիրտս սաստիկ կը փափախէր և քանի իր վատ վար-
մունքը միտքս կ'լինար ձեռքս ու ոտքս դող կ'ելլեր :

Ժամը երկուքին տասը մնացած Մ . . . պարտէզին
դրնէն ներս մտաւ , ու զիս տեսնելով ուրախ իմ կող-
մըս դիմեց :

Կամացուկ մը ընկերութիւն ըսի :

— Վատը եկաւ , պատրաստ կեցիր :

— Կատրտուելով մը մտեցաւ և իր կեղծ շաղակ-
րատութիւնը ձեռք առաւ :

— Ս,յս ինչ բարերազդութիւն է , շիտակը այս
բացառիկ շնորհը չ'էի յուսար . . . :

Դեռ խօսքը չ'աւարտած աշակերտութիւն երեւան
ելաւ :

Երբ զայն տեսաւ դեղնեցաւ և ետ ետ երթալով
ըսաւ :

— Դուն ալ հո՛ս . . . :

— Վատ շուն ըսինք , երկուքնիս մէկ բերան և ե-
րեսը թքնելով պարտէզէն մեկնեցանք :

Կեցած տեղը արձանացած մնաց ,

Պարտէզին դռնէն արհամարհանաց վերջին ակնարկ
մըն ալ ձգելով տուն դարձանք :

Ս,յսպէս լուծեցինք մեր վրէժը :

Երկուքնիս ալ գոհ մնացինք :

Երեկոյին նախատալից և արհամարհիչ նամակ մը
գրելով երկուքնիս ալ ստորագրեցինք . մեզ տուած
սիրային յիշատակները սոյն գիրին կցելով իրեն վերա-
դարձուցինք :

Ահա այսպէս վերջացաւ ինձ երջանկութիւն և ապագայ խոստացող սէր մը :

Կը խորհիմ թէ աշխարհիս վրայ նմանօրինակ վատութիւն մը, նմանօրինակ հրեշային զեղծում մը արդեօք գործուած է . . . : Մաքուր և անկեղծ սէր մը խաղալիք ընել, կոյս ու անարատ սիրտ մը ցեխերու մէջ թաթխել . . . , ի՞նչ անազնուութիւն . ի՞նչ վատութիւն և ի՞նչ ցած ոգիութիւն . . . :

Լոկ ժամանց մը ընելու, վայրկենական և գաղանական հաճոյք մը վայելելու համար մեր երկուքին պատիւը իր աղտոտ ձեռքերուն մէջ առած, երկարատեւ մեզ խաբեց . ի՞նչ սրիկայական սիրաբանութիւն, ի՞նչ անգթութիւն . . . :

Կեղծիք, խաբերայութիւն, վատութիւն, անխըղձութիւն կը տեսնես շորս կողմէ :

Արժանապատուութիւն և պատւոյ նախանձախընդրութիւն չ'եղած տեղ մը մարդ հազիւ իրաւունք ունի ապրելու : Եւրոպական բարքերուն և կենցաղավարութեան միայն արտաքին ձեւը (forme) կապկորար ընդօրինակած ենք, այն ալ իրար խաբելու, իրարու աչք շլացնելու համար, և ընդհակառակը հիմը (fond) անտեսած ենք : Այս պատճառաւ հաւասար կը պատուենք ու կը յարգենք վատն ու ազնիւը, խղճամիտն ու անխիղճը, արժանաւորն ու անարժանը, ուղղամիտն ու խաբերան, բարեսիրտն ու չարասիրտը, տգէտն ու գիտունը, և այլն, իրենց արժանիքնուն համաձայն չ'ենք վարուիլ, յարգելու մարդը կ'ատենք և ատելու մարդը կը սիրենք :

Աշակերտուհիս դաշնակին մէջ շատ յառաջադիմեց .
մեր սրտերը խոցող այն դժբաղդ օրէն 'ի վեր ամե-
նախիստ մտերմութիւն մը հաստատեցինք :

Այսօր մոռցուած հին բարեկամուհիի մը այցելու-
թիւնը վայելեցի , իրեն հետ Հով-Սեուլին մէջ դասա-
կից էինք , վեց տարիէն աւելի կայ որ իր վրայ լուր մը
առած չ'էի , յանկարծ երեւան ելաւ :

Բժիշկի մը հետ ամուսնանալով Ամերիկայ գացեր
է , այժմ Պոլիս մնալու փափաք ունի :

Ամուսինն Տօք . Տ . . . եան խիստ նրբացած և գը-
ւարճախօս մէկն է , կատարեալ եանփին մը որ բոլո-
րովին կորսնցուցեր է իր գաւառացիի յատկութիւնը :

Բայց քիչ մը պարծենցող երևցաւ ինձ :

Իրենց այցելութենէն շատ գոհ մնալով լաւ ընդու-
նեւութիւն մը ըրի : Երկու փոքրիկ մանչ գաւակները
հրեշտակներու կը նմանէին , այնչափ սիրուն , այնչափ
քնքշիկ որ համբուրելով չ'էի կշտանար :

Արդեօ՛ք Աստուած ինձ պիտի պարգեւէ՞[՞] ասոնց
նման գանձ մը

26 Սեպտեմբեր

Հայրս այս գիշեր սեղանին վրայ ամուսնութեան
կարեւորութիւնը և անհրաժեշտութիւնը թուելով ' իր
ծերութիւնը , գալիք բնական մահը և մեռնելէն վերջը
այս փորձանաւոր աշխարհիս մէջ անպաշտպան մնալս
ինձ յիշեցուց :

— Աղջիկս, ըսաւ հայրս, վերջին պարտականութիւնս է քեզ պաշտպանի մը ապահով ձեռքերուն յանձնել. իմ մեռնելէս վերջը չ'եմ ուզեր որ որք եւ անօգնական մնաս. ուրեմն, քանի որ յարմար ժամանակն է և մանաւանդ ձեռքդ խնդրող մը ներկայացած է, խոստացիր որ զիս չը մերժելով այդ անձին հետ ամուսնանաս :

— Սիրելի՛ հայր, պատասխանեցի այս յայտնութենէն կարի յուզուած, մինչեւ այսօր կամքդ միշտ յարգեցի. ինձ արժանի տեսածդ միթէ կրնա՞մ մերժել . . . :

— Օրհնեալ ըլլաս աղջիկս, այս կիրակի աղջիկատես պիտի գան. բոլորովին կամքիդ հակառակ վարուիլ չ'եմ ուզեր, ազատ ես, եթէ հաւանութիւնդ տաս կը վերջացնենք :

— Լաւ կ'ըլայ, ըսի և զիս խնդրողին անունը եւ արհեստը հարցուցի :

— Պէշիկթաշ կը բնակի, պատասխանեց հայրս կաշիի վաճառական Գ. Ս. . . եանն, բաւական զարգացած երիտասարդ մը՝ որ ճաշակիդ լաւ կը յարմարի :

Գիշերը անկողինս մէջ, ամուսնանալու համար աղջիկսեսի հին՝ այլ ամենէն պարզ և գործնական եղանակին վրայ խորհելով զայն սիրա-վիպային կամ իսէալական ամուսնութեանց հետ կը բաղդատէի . . . եւ առաջինը աւելի յուսալից և աւելի հաստատուն կը դանէի :

Եւ մեր մէջ մինչեւ ցարդ ամուսնացողներէն շատերը միթէ այդ գործնական վաղեմի միջոցին դիմած չ'ե՞ն. անոնցմէ ո՞րը ապերջանիկ եղած է, և քանիներ կրնա՞ն համբուիլ որոնց միութեան կապն վիպային կամ իսէալական սէրն եղած է . . . :

Ուրեմն, ինքզինքս ամենայն սիրով աղջիկեսսի բու-
լոր պատահականութեանց պիտի պատրաստեմ:

1 Հոկտեմբեր

Այս կիրակի Գ. Ս. . . եան իր մօր հետ աղջիկեսսի
եկաւ: Ամենէն ճաշակաւոր շրջազգեստս հագնելով
ըստ սովորութեան ձեռքովս սուրճ և անուշ հրամցուցի.
սուրճին դաւաթը առած միջոցիս քաղաքավարի ջուր
մը խնդրեց:

Ջուրը հրամցունելով հեռացայ:

Քիչ վերջը իրենք ալ մեկնեցան:

Անոնց մեկնելէն վերջը հայրս և ես մինակ մնալով,
հայրս հարցուց:

— Ի՞նչպէս դատար, հաճելի չ'է՞ . . . :

— Ինձի հաճելի ըլլալը ի՞նչ օգուտ ունի, քանի որ
ինքը գիտ չը հաւնեցաւ, ըսի տխուր շեշտով մը:

— Կը սխալիս, ըսաւ հայրս դարմանալով:

— Է՛հ, եթէ հաւնած ըլլար, իբր խօսք-կապ մա-
տանի մը կուտար:

— Անգէտ աղջիկ մատանի, նշանառութիւն եւ-
այլն վերջէն ըլլալիք բաներ են, մեր սովորութեանց
մէջ հաւանութեան նշանը տարրեր է, դուն միայն
կերողական սովորութիւնները կարգացեր ևս ու գի-
տես: Քեզմէ ջուր մը չ'ուզե՞ց . . . :

— Այո ուզեց:

— Ահա մեր մէջ հաւանութեան նշանը այդ է, ը-
սաւ հայրս միամտութեանս վրայ ծիծաղելով:

— Ի՞նչ տարօրինակ սովորութիւն, պատասխանեցի

իր բացատրութենէն ուրախ, շէնք շնորհք երիտասարդ մըն է, ընթերցասէր կ'երևի:

— Այո՛, կանխաւ գասատու է եղեր, հիմա նոր գործ էն լաւ կը շահի:

— Ուրեմն, ըսի, ձեռքը չը պիտի մերժեմ. Աստուծոյ կամքը ինչ որ է՝ այն թող ըլլայ:

— Թէեւ հաւանութիւնը տուաւ, սակայն տեսնենք դրամօժիտի խնդիրը ի՞նչ պիտի ընենք. բուն դժուարութիւնը հոտ է, սիրելի աղջիկս, ա՛խ եթէ ունենայի զքեզ երջանիկ ընելու համար հազարներով պիտի տայի, ինչպէս որ կրթութեանդ համար չը խընայեցի: Բայց ախո՛ս, մայրիկիդ ու քրոջդ հիւանդութիւններն և հրդեհը զիս փճացուցին:

— Պատուական հայր, երբէք դժգոհ չը պիտի ըլլամ, ճակատագրիս առջեւ անտրտունջ պիտի խոնարհիմ. եթէ ամեն բան կարգադրելով — ձեռքդ տուր — ըսես պիտի տամ, հակառակ պարագային առանց ցաւելու սեւ բաղդիս պիտի համակերպիմ. ըսի խեղճ հայրս մեղքնալով.

16 Հոկտեմբեր

Գործնական եղանակաւ ամուսնանալու յոյսս ալ ջուրը ինկաւ:

Աստուած իմ, այս ո՛րչափ տառապանք և սրտմաշոք է որ կուտաս ինձ. երիտասարդական ծաղիկ հասակիս մէջ և կեանքի դարուներ չը վայելած դրեթէ պառաւջայ:

Ձեռքս խնդրող Գ. Ս. . . եանը 500 ոսկի դրամօ-

ժիտ պահանջեր է. հայրս որչափ որ պարտք ընելով
100 ոսկի կանխավճար մը ընել և մնացածն ալ տարին
50 ոսկի վճարելով գոցել խոստացեր է, սակայն չ'է
ընդուներ: Շահամուլ և անձուկ մտքի տէր, հոգւոյ
ազնուութիւն չ'ունի եղեր . . . :

Այս, այս անիծեալ դրամօժիտը . . . ինձ նման քանի
ծաղիկ կեանքեր արդեօ՞ք ցուրտ գերեզման առաջ-
նորդեր է . . . :

Միթէ ժամանակիս երիտասարդութեան համար
ստացած բարի եւ լուրջ կրթութիւնս մեծ դրամօժիտ
մը չ'է՞ . . . , տան մը բարոյական և նիւթական հիւնը
միթէ կնոջ մը դաստիարակութենէն կախեալ չ'է՞:

Չեմ ըսեր թէ դրամականն ալ մեծ տեղ մը չը
բռնէր, բայց քիչ շատ կարողութիւն ունեցող երի-
տասարդներ, ինչպէս Գ. Ս . . . եանը, կնոջ մը բարո-
յական արժանիքը նախապատուելու չ'են . . . :


Այս ընթացքով ամուսնանալու երբէք յոյս ունե-
նալու չ'եմ: Միակ գործնական ճամբայ մը մնացած է,
այն ալ իմ գործիս չը գար, այսինքն պարզ արհես-
տաւորի մը հետ ամուսնանալ: Իմ ճաշակս, կրթու-
թիւնս, զարգացած ու նրբացած դաստիարակութիւնս
երբէք չ'են համաձայնիր արհեստաւոր դասու կարգին
պատկանող և միջակ կրթութիւն ստացող երիտասար-
դի մը հետ. անհաւասար եւ աններդաշնակ կենակ-
ցութեան մը մէջ հաճոյք և երջանկութիւն փնտուելը
յիմարութիւն է, և այդ կեանքը նահատակութիւն
մը . . . :

20 Նոյեմբեր

Նախկին դասնկերուհիս Տիկին Տօքթ. Տ. . . եան ,
այսօր այցելութեան գալով եւ ամուսնութեանս ան-
յաջողութիւնը լսելով շատ ցաւեցաւ :

Մեր ապրած միջավայրէն ինքն ալ դժգոհ է , ՚ի
մօտոյ ամուսինին հետ Ամերիկայ վերադառնալ կը փա-
փաքի :

Ամուսինը փոքր Ասիոյ կողմերը պտոյտ մը ընելէն
վերջը պիտի դառնայ . ամուսնոյն բացակայութեանը
աւելի յաճախ այցելութիւններ տալ խոստանալով մեկ-
նեցաւ :



.Թ.

6 Յունիս 1878

Երէկ Բերայ ելայ Տէր եւ Տիկին Տօքթ. Տ. . . եանի
այցելութիւն մը տալու համար :

Գիշերը հոն մնացի :

Սովորական այցելութիւն մը չ'էր , Տօքթէօրին ող-
ջերթ պիտի մաղթէի , ինչպէս որ մտադիր էր Փոքր-
Ասիոյ կողմերը պտոյտ մը կատարել , այսօր մեկնեցաւ :

Գիշերը ընդ երկար խօսեցանք , խօսքը ապագայիս
վրայ գալով Տիկին Տ. . . եան ըսաւ :

— Ամուսինս իր ճամբորդութեան մէջ ծովեզերեայ
և ներքին մեծ քաղաքներ այցելելու մտադիր է , միտ-
քըս բան մը ինկաւ , գաւառացիներուն մէջ հիմայ քիչ

չատ զարգացած և կարողութեան տէր անձինք պա-
կաս չ'են, վաճառականներէն զատ փաստարաններ և
բժիշկներ ալ կը գտնուին. եթէ անոնց մէջէն ամուս-
նանալ ուզող ազկկ մէկուն քեզ յանձնարարէ լաւ
կ'ըլլայ, ճաշակիղ եւ գաղտնիարիղ համաձայն ամու-
սին մը ունեցած կ'ըլլաս և բարձր դաստիարակու-
թեամբդ տեղւոյն իգական սեռին, հետեւարար բո-
լոր ազգայնոց օգտակար ծառայութիւններ կրնաս
մատուցանել, ինչ որ արդէն փափաքդ է, ինչ որ քեզ
հաճելի պիտի թուի:

— Ի՞նչ կ'ըսէք, կարելի բան է՞ ըսի, իր այս տա-
րորինակ գիւտին վրայ ծիծաղելով:

— Մի՛ ծիծաղիր, ըսածիս մէջ անկարելի բան մը
չ'կայ, ամենէն պարզ և ամենէն գործնական միջոց
մըն է: Ինչո՞ւ կը զարմանաս, երկու տարի առաջ օ-
րիորդ Ս... միթէ գաւառացի վաճառականի մը հետ
ամուսնանալով մօտակայ քաղաք մը չը գնաց... , ես
այն ատեն լրագիրներէն տեղեկացայ և ջատագովեցի
իր այս գործնական ընթացքը: Քեզ նման նէ ալ մի
եւ նոյն բարձր դաստիարակութիւնը և կրթութիւնը
ստացած է, եւ հիմա բարեկամուհիներուն գրած նա-
մակներէն կ'իմանամ թէ իր վիճակէն շատ գոհ է ե-
ղեր... :

— Թերեւս ճաշակիս համաձայն մէկը չը պատահիր,
այն ատեն ամուսնութիւնը ինձ յաւիտենական տան-
ջանք մը պիտի ըլլայ. ես աւելի կ'ընտրեմ դաշնակի
դասեր տալով ապրիլ, քան թէ սրտիս ու կամքիս հա-
կառակ մէկու մը հետ ամուսնանալով սեւ օրեր ան-
ցունել:

— Սխալ կը խորհիս, եթէ երբէք ճաշակիղ չը յար-
մարի կրնաս մերժել, քեզ բռնի տուող չ'կայ, մանա-

ւանդ որ ամուսինս քեզ անարժան մարդու չը յանձնարարէր :

— Շիտակը ես իմ վրայ մտածելու կարողութիւն չունիմ, ներսս այնչափ ատելութեամբ ու արհամարհանքով լեցուած է որ ասանկ կեղծաւոր և շահախորնդիւր միջավայրի մը մէջ ապրիլ իսկ չ'եմ ուզեր . . . :

— Այստեղի համար ըսածդ ճշմարիտ է, բայց գաւառներու համար խնդիրը կը տարբերի. հոն այնչափ կեղծիք չ'կայ, իրենց սրտին պէս սլարզ կեանք մը կը վարեն :

— Ես անոր լաւ փեսացու մը կը գտնամ, ըսաւ Տօքթէօրը միջամտելով :

— Այո՛, այո՛, յարմար ամուսին մը գտիր, բայց քիչ մը գեղեցիկ եւ կրթեալ երիտասարդ մը ըլլայ, ըսաւ բարեկամուհիս երեսիս կատակաբար թեթեւ ապտակ մը զարնելով, Եւ իսկոյն յարեց :

— Այնպէս չ'է՞ :

— Դուք գիտէք, անշուշտ ինձ գէշ չ'էք կամենար, ըսի տխուր կերպով մը :

— Քեզի միշտ կը գրեմ եւ կարծիքդ կ'առնեմ ըսաւ Տօքթէօրը :

— Շնորհակալութիւնս կը յայտնեմ ըսի :

Վերջապէս երէկ գիշեր այս որոշումը տալով առաւօտուն զինքը շոգենաւ դրինք : Սեւ ծովով պիտի ճամբորդէ, Տէրը հետը ըլլայ :

12 Յուլիս :

Ս . . . եան էֆ . մի քանի օրէ ի վեր տկար էր, այսօր Տօքթ . Սարէլ և Տօքթ . Մաթէոսեան վիրաբու-

Ժական գործողութիւն մը կատարելով ոտքին ոսկորէն
փտտած մաս մը հանեցին : Գործողութեան ես ալ
ներկայ գտնուեցայ :

Պէյֆօզ բնակող իրենց ազգականներէն Տէր և Տի-
կին Փ . . . եան նոյնպէս ներկայ էին . այս երկու ազնիւ
ընտանիքները ինձ միշտ ցաւակից եղած են :

Հիւանդ մը խնամելու մէջ ունեցած փորձառու-
թիւնս գիտնալով աղաչեցին որ էֆէնտիին հիւանդա-
պահի պաշտօնը ես կատարեմ, բժիշկներն ալ նոյնը
խնդրեցին . չը կրցի մերժել, պարապ ժամերս միշտ իր
քովը պիտի գտնուիմ, Տէրը յաջողէ :

Այս ազնիւ գերդաստանը իմ նեղ օրերուս զիս միշտ
մխիթարած են . թէ երախտագիտական փոխադարձ
պարտականութիւն մը և թէ մարդասիրական գործ
գործ մը կատարելու համար յանձն առի :

21 Յուլիս

Ս . . . եան էֆ . իի վերքը գոցուելու և առողջու-
թիւնը վերստանալու վրայ է . շատ ուրախ եմ Աստ-
ուած մի՛ արասցէ . խեղճ մարդուն եթէ վնաս մը գար,
երեք մանր զաւակները իրեն մանկամարդ կնոջ հետ
թշուառ պիտի ըլլային . գրեթէ միշտ աղօթքներուս
մէջ գինքը կը յիշեմ :

Ցերեկները իր քով վէպ մը , բանաստեղծութիւն
մը կարդալով ժամանակ կ'անցնեմ . ինքն ալ գրասէր
է և այս կարգի գրուածներէ մեծ հաճոյք կ'զգայ :

Այսօր Գ . . . քաղաքէն Տօքթ . Տ . եանէ նամակ մը ստացայ . իր խոստմանը վրայ հաւատարիմ մնալով , ինձ յարմար եւ արժանի ընտրելի մը գտած ըլլալը կիմացնէ , այսպէս վերջացնելով գիրը :

« Ուրեմն սիրելիս , այս թուշուեր ձեռքէ չը փախ-
« ցընես , Պօլսոյ մէջ փնտռած ու չը գտած դ է . ար-
« ուեստով , մտքով , սրտով , հոգւով և եթէ կ'ուզես
« հասակով բարձր երիտասարդ մըն է . . . »

« Այնչափ ազնիւ է որ եթէ հասուն աղջիկ մը ու-
« նենայի իրեն կուտայի . չը մոռնամ յիշել թէ իր բը-
« ժիշկի բարձր արուեստէն և գիտնականի համբաւէն
« զատ գրագէտ մըն ալ է . . . »

« Քեզ ուղղեալ նամակ մը յանձնեցի իրեն , կը նե-
« րես որ կանխաւ իրեն կարդացի , դուն երբէք գիտ-
« ցած մի' ըլլար , որովհետեւ քեզ բացէն գրելս չը
« գիտեր : »

« Եթէ յաջողիս , բաղդաւորութիւնդ զարմանալի
« զուգադիպութեան մը կը պարտիս : Մի քանի ան-
« գամ իրեն հետ տեսակցելէ վերջը , թէ' ամուսնա-
« նալու և թէ հիւանդ մայրը տեսնելու համար Պօլիս
» իջնել ուզելը ինձ իմացնելով , խնդրեց որ մինչև վե-
« րադարձը իրեն պաշտօնին փոխանորդեմ . այսինքն
« ապօնկներուն նայիմ : Իր առաջարկը սիրով յանձն
« առի , և մի եւ նոյն ատեն քու խօսքդ բացի , հարկ
« չը կայ ըսել թէ երկար բարակ բարեմասնութիւն-
« ներդ յիշելով՝ շատ գոհ մնաց :

« Վաղը տեղէս ճամբայ պիտի ելլէ , բայց սուր-
« հանդակը իրմէ քանի մը օր առաջ կը հասնի , հետե-

« ւարար սոյն գիրս ստանալից երկու շաբաթ վերջը
« հազիւ քեզ տեսնել կրնայ գալ: Քեզ նայիմ, լաւ որս
« մըն է, գնդակից մի՛ վրիպեցնէր, իր այցելութիւնը
« գաղտնի և ծածուկ ազջիկտես մը ըսել է. . . »

« Արդիները շուտով դրէ ինձ, »

« Ուժգին սեղմելով ձեռքդ և կատարեալ յաջողու-
թիւն մաղթելով »

« Կը մնամ և այլն. . . »

Կենացս էն գերագոյն վայրկեաններէն մին պիտի
ըլլայ այն օրն եւ թերևս վերջինը . . . , երջանկութիւնս
կամ ապերջանկութիւնս իր կամքէն կախեալ է. . . :

Ինձ ներկայանալիք բժիշկը ի . . . եանն է, անուամբ
չստ ծանօթ և համակրելի մէկը. իր գրութիւններն և
առողջաբանական հրատարակութիւնները մեծ ախոր-
ժով կարդացած եմ. ազնիւ հոգի մը, բարի սիրտ մը
ունենալը իր գրիչէն յայանի է:

Այս առթիւ թէ ուրախ և թէ տրտում եմ. ու-
րախ՝ վասն զի բարեկամիս նկարագրածին պէս ինձ
յարմարագոյն և տիպար ամուսին մը կրնայ ըլլար.
տխուր՝ վասն զի կը վախնամ թէ կամ զիս չը հաւ-
նիր և կամ ո և է առարկութիւն մը կ'ունենայ. . . :

Այս մտածումներով սիրտս դողի մէջ է և միշտ
կասկածոտ եմ. ո՛հ, եթէ դրամօժիտի խնդիրը դարձ-
եալ յուզուի, պիտի խենդենամ. . . , զգացած ցաւէս
պիտի մեռնիմ:

Վերջապէս ինձ համար այն օրը մահու եւ կենաց
խնդիր մը պիտի ըլլայ. . . :

Ս . . . եան էֆ . իի ոտքին վերքը թէ եւ անցաւ , սա-
կայն անկից քիչ մը վար նոր ուռեցք մը գոյացաւ : Իը-
ժիշկները այսօր գործողութիւն մը ևս կատարեցին ,
գործողը Տօքթ . Գամպուրօզուն էր , ճարտար եւ
փորձառու վիրաբոյժը :

Բոլոր բժիշկները կը վստահեցնեն թէ ուրիշ գոր-
ծողութեան մը հարկ չախտի մնայ . խեղճ մարդը սր-
չախի տառապեցաւ :

Գ . . . քաղաքէն Տօքթ . Տ . . . եան բարեկամէս այ-
սօր նամակ մը ևս ստացայ : Նամակին նիւթը դարձ-
եալ մեծ մասամբ ինձ ներկայանալիք երիտասարդին
վրայ էր , այսպէս կ'սկսէր :

« Սիրելիս , առաջին նամակս գրելէս վերջը , Տօքթ .
& Բ . . . եանի վրայ տեղեկութիւններ հաւաքեցի . բո-
ւոր քաղաքացիք զինքը կը գովեն . իր արուեստին
« մէջ յաջողակ ըլլալէն զատ , շատ բարեսիրտ և ազ-
« քատասէր է եղեր : Այս պարագան մասնաւորապէս
« ուշադրութեանդ կը յանձնեմ , սրպէս զի դրամօժիտի
& խնդիր ծագած ժամանակ , ուղղակի սրտին դիմես .
« չ'եմ կարծեր թէ պնդէ , իր փնտռածն օլ քեզ նման
« կրթեալ և անտեսող ազգիկ մըն է » :

Այս վերջին տեղեկութիւնները ինձ մեծ յոյս կու-
տան . հայրիկս զիս բոլորովին վստահացուց :

— Աղջիկս , դուն հոգ մի՛ ընէր , ըսաւ , ևս ինք .

զինքս կը ծախեմ զայն գոհ ընելու համար . դուն
այդ հոգը իմ վրայ ձգէ . անձամբ զինքը չեմ ճանչնար
իր գրիչը ինձ ծանօթ է . անշուշտ իրարու ըսածնիս
լաւ պիտի հասկնանք :

— Ոհ , հայրիկ , եթէ այս անգամ ալ չը յաջողինք
ինք զինքս պիտի կախեմ , չեմ ուզեր որ թշնամիներս
վրաս խնդան , քաշածս ալ բաւական է . . . :

— Անհոգ եղիր այդ յաջողութիւնը ինձմէ սպասէ ,
ըսաւ խեղճ հայրս յուզուելով :

— Արդեօք Պօլիս հասեր է՞ , լուր մը առի՞ր , հար-
ցուցի :

— Դեռ չ'է հասեր . շատերուն հարցուցի , բնիկ
Պոլսեցի ըլլալով մայր մը , եղբայրներ , քոյրեր , քե-
ռորդիներ , ինչպէս նաեւ երկու խանութ և Սամաթիա
տուն մը ունի եղեր :

Անհամբերութեամբ գալուն կ'սպասեմ :



Ժ.

1 Սեպտեմբեր

Վերջապէս այնքան անհամբերութեամբ սպասած
հիւրս այսօր եկաւ . երբեք չ'էի յուսար թէ ասանկ լուր
օր մը կ'այցելէ :

Ս . . . եան էֆ . ի քովն էի երբ սպասուհիս եկաւ
խմացնել Տօքթ . Բ . . . եանի այցելութիւնը . անմիջա-
պէս ցատկեցի . կենացս մէջ այսօրուան չափ յուզուած
չ'եմ , տիկին Ս . . . եան , որուն խնդիրը բացած էի ,
սրտանց յաջողութեանս համար կ'աղօթէր :

Հագուստներս փոխելով հիւրասենեակ մտայ :

Աստուած իմ ի՞նչ տեսնեմ . . . , անուշաչերով, փոքրր չրթուներով, սեւ մազերով գեղեցիկ կլորիկ մորուքով և նուրբ պեխերով, համակրելի և գրաւիչ տեսքով բարձրահասակ երիտասարդ մըն էր հիւրս :

Ներս մանելուս պէս ոտքի ելաւ և ձեռքը երկնցընելով, լուրջ այլ խիտ քաղաքավարի ըսաւ :

— Տօք . Տ . . . եան էֆ . ի շնորհիւ պատիւ ունիմ ձեզ ներկայանալու և ներկայացնելու իր մէկ գիրը :

Ձեռքս սեղմել և թող տալէ վերջը գրպանատէտրէն նամակ մը հանելով ըսաւ :

— Ահաւասիկ .

— Շնորհակալութիւնս կը յայտնեմ, ըսելով մեքենաբար նամակը բացի և կարդալէ վերջը ըսի :

— Շատ ուրախ եմ որ հաճեցաք ձեր այցելութեամբը զիս պատուել :

— Նոյնպէս ես, ըսաւ, Տօք . Տ . . . եան էֆ . ձեր վրայ շատ գովեստով խօսեցաւ և ես ալ նոյնը հաստատելու բարեբաղդութիւնն ունենալուս շատ գոհ եմ :

— Այդ ձեր ազնուութիւնն է, ըսի :

Այնպիսի լուրջ դէմք մը ունէր որ կարծես թէ պարզ այցելութեան մը համար եկած էր . իր ներքին նպատակը երբէք չ'էր մատներ . իր խօսակցութիւնը թէ և պարզ՝ այլ շատ հմտալից և նպատակաւոր էր :

Ընկերական խնդիրներու վրայ գաղափար փոխանակեցինք, ինձ հետ գրեթէ մի և նոյն համոզումներն, մի և նոյն կարծիքը կը յայտնէր . գաղափարներու և մտածումներու զարմանալի նոյնութիւն մը ունէինք :

Վեհ զգացումներով և ազնիւ մտածումներով իր հողին լցուած էր, մարդկային թշուառութեանց վրայ

անսահման գութ ունէր . յառաջադիմական և բարոյ-
յական բարձր սկզբունքներու կատարեալ սիրահար ,
վերջապէս ամենաբարձր նկարագրի տէր մէկն էր , գէթ
ինձի համար . . . :

Երկու ժամի չափ նստելէ վերջը կիրակի կրկին այ-
ցելելու խոստմամբ մեկնեցաւ :

5 Սեպտեմբեր

Այս կիրակի Տօք . Բ . . . եանի այցելութիւնը կրկին
վայելեցի :

Համակրութիւնս և սէրս երթ ալով կ'աւելնայ , ան-
կեղծաբար կը խոստովանիմ թէ մինչեւ ցարդ իւրն
նման համակրելի դէմքի մը երբէք պատահած չեմ :

Մեկնիլ սեղեց , խնդրեցի որ գիշերը մեզի մնայ և
հայրիկիս հետ տեսնուի :

Գիշերը մնալու անկարելիութիւնը յայտնեց :

— Գատը գիւղ մինակ չ'եկայ քոյրերս ևս միա-
սին են , բարեկամի մը այցելութեան զայցինք , և ևս
խոստումս կատարելու համար միջոց մը անոնցմէ հե-
ռանալով ձեզ տեսնել եկայ ըսաւ :

— Ծնորհակալ եմ աւելի ուրախ պիտի ըլլայի ե-
թէ ազնուուհի քոյրերնիդ ևս միասին բերէիք ըսի :

— Խիտ լաւ անկից քիչ մը կանուխ մեկնելով
ձեզ ներկայացնելու պատիւն կ'ունենամ , ըսաւ :

— Չափազանց գոհ պիտի ըլլամ ըսի :

— Արդարեւ ժամը իննիմ միջոցները երկու քոյ-
րերը և քեռդուսարները միասին առած վերստին այ-
ցելեց :

Այս այցելութեան ներքին նպատակը պարզ աղ-
ջիկաես մը ըլլալը զգացի :

Սակայն նպատակնին ինչ որ ալ ըլլար, ես բոլորո-
վին պարզ և անկեղծ կերպով վարուեցայ, իրենց նը-
պատակնին չը հասկցած ձեւանալով :

Քոյրերը ամուսնացած են, ուսում չ'ունին, բայց
բարեսիրտ և համեստ կ'երևան :

Իսկ քեռդուսարներուն գալով, խիստ գեղեցիկ եւ
բաւական զարգացած են. մեծ օրիորդը հայերէնէն
զատ գաղղիերէն և յունարէն կարողալ գրել գիտէ,
և փոքրը հայերէնի հետ միայն գաղղիերէն. զիրենք
չատ սիրեցի :

Մեր խօսակցութիւնը լոկ բարեկամական եղաւ, ծա-
նօթ խնդրոյն վրայ ո և է ակնարկութիւն շ'ըրին :

Վերջին շոգենաւով մեկնեցան :

Չեմ գիտեր թէ իմ վրայ ի՞նչ գաղափար կազմե-
ցին, անչուչտ իրենց կարծիքը եղբօրնուն վրայ մեծ
ազդեցութիւն պիտի ունենայ :

7 Սեպտեմբեր

Բարեբաղդարար սպասուհիս անոնց ծանօթ ելաւ,
տասը տարի առաջ մի եւ նոյն թաղը կը բնակի եղեր :

Այսօր հօրս խորհրդովը սպասուհինիս իրենց տունը
դրկեցինք, գաղափարնին շոչափելու համար :

Քոյրերը թէև հաճութիւն տուեր, սակայն 500
ոսկի դրամօժիտ պահանջեր են, սպասուհիս ալ պա-
տասխաներ է :

— Գուցէ 300 ոսկի կրնան տալ, այն ալ աւելորդ
կահ կարասիները ծախելով, սակայն մեծածախ օժիտ
մը պատրաստ ունի որ շատ գոհ պիտի մնաք :

— Ես եղբայրս գեանէն դտած չեմ, 1000 ոսկի
դրամօժիտ տուող ալ կայ, բայց ինքր նոր խելքի ծա-
ռայելուն չը հաւնեցաւ, ուսեալ կը փնտռէ, հոգ չէ,
սակայն քանի որ սիրտը այն սիրեր է թող առնէ,
սակայն 500 ոսկիէն պակաս դրամօժիտով կարգուելը ի-
րեն ամօթ է, հասարակ դեղագործներ 500—600 ոսկի
դրամօժիտով կարգուեցան, իմ եղբայրս անոնցմէ՞ ալ
վար է . . . , պատասխաներ է մեծ քոյրը :

Սպասուհիս ըսեր է :

— Ձեր եղբայրը խնդրուած դրամօժիտէն շատ վեր
արժանիք ունի. շիտակը եթէ հայրը դրամ ունենայ
հազարներով կուտայ, այսօր աղքատ ինկեր է, բայց
ազնուական պատուաւոր գերդաստան մը են, աղջիկը
առնելով չէք խորուիր :

— Գիտցողին իմ եղբայրս, գանձ մընէ, աւելցուցեր
է փոքր քոյր :

Ահա դարձեալ մէջ մտաւ դրամօժիտի անիծեալ
խնդիրը բայց այս անգամ անյոյս չեմ, կարծես թա-
գուն և խորհրդաւոր ծայն մը ինձ կ'ըսէ :

— Դիմացինդ ազնիւ հոգի մը, բարի սիրտ մը ու-
նի, շահամուլ եւ ետական չէ. քանի որ քեզ սիրեց ան
քուկդ պիտի ըլլայ . . .

Իցիւ թէ այս ձայնը զիս խորած չ'ըլլար, հայրս
հոգւով մարմնով գործին յաջողութեան կ'աշխատի :

Այսօր չափազանց յուզուեցայ . ցերեկէն սկսեալ մինչեւ ներկայ վայրկեանս աշերէս արտասուքները չը դադրեցան , սրտիս նեղութենէն սենեակիս մէջ առանձինն հեծ կլտալով կ'արտասուեմ :

Աշխարհիս վրայ արդեօ՞ք ինձ նման տարաբաղդ և թշուառ մը եւս կայ . . . :

Երէկ գիշեր Պօեանը գիւղ ազգականներէս մէկուն հիւր էի , այս առաւօտ վաստիորէն մեկնող երկրորդ շոգենաւով կամուրջ իջայ . ցերեկուան դադարէն առաջ Գասը գիւղ մեկնող վերջին շոգենաւը կրցի մըտնել :

Շոգենաւը Լէանդրի աշտարակի առջեւէն անցած պահուն գլուխս մէկ կողմ դարձնելով Տօթթ . Բ . . . եանը կողմի խցիկներէն մէկուն մէջ տեսայ ,

— Ո՛հ , այն ալ Գասը գիւղ պիտի ելնէ և անշուշտ մեզ այցելելու համար , ըսի մտովին :

Ուրախութիւնս անսահման էր :

Կոչիկ ներկող տղայ մը զրկեցի ու գինքը քովս հըրաւիրեցի :

Անմիջապէս քովս եկաւ . բաւական յուզուած էր շնորհալի կերպով մը ձեռքս սեղմեց :

— Անշուշտ մեզ այցելելու միտք ունիք , միասին կ'երթանք , բարեբաղդ հանդիպում մը եղաւ , ըսի :

— Կը ներէք որ այսօր ձեզ չպիտի կրնամ այցելել , ուրիշ բարեկամի մը խօսք տուած եմ . ըսաւ

— Պիտի գիշերէ՞ք , հարցուցի :

— Ոչ , վերջին շոգենաւով պիտի մեկնիմ :

— Ուրեմն, անկից քիչ մը կանուխ մեկնելով կըր-
նաք ձեր այցելութեամբը մեզ ալ պատուել :

— Եթէ միջոցս ներէ կը խոստանամ, ըսաւ և ոտ-
քի ելնելով աւելցուց :

— Կը ցաւիմ որ ձեզմէ բաժնուելու ստիպուած եմ,
հետս ընկեր ունիմ :

Եւ արդէն նոյն պահուն շոգենաւը Գասր-զիւղի
մօտեցած էր :

Երբ Գասր-զիւղի նաւամատոյցը ելայ նշմարեցի որ
ընկերներէն մին կին եւ միւսը էրիկմարդ էր :

— Անոնց հետ բարեկամի մը այցելութիւն տալը
ի՞նչ կը նշանակէ, ըսի ինքնին :

Մանաւանդ իրեն ընկերացող կնոջ հագուստէն ու
կապուստէն կը կասկած էի :

Երեքը միատեղ կառք մը վարձելով Ս. Թագաւոր
եկեղեցիին առջեւէն քշեցին :

Կառապանը ինձ նախածանօթ հայ մ'ըն էր, երե-
կոյին գինքը կանչելով հարցուցի :

— Այսօր ցերեկին կառքին մէջ տարիքոտ կին մը
և երկու էրիկմարդ առիւր, անոնք ո՞ւր տարիւր :

— Փ . . . Եաններուն, պատասխանեց :

Կասկածս կամաց կամաց կ'իրականանար, այդ ըն-
տանիքը կը ճանչնայի :

— Այցելութեան նպատակին հասկցա՞ր, ըսի :

— Ինչպէս չ'է. պարզ աղջիկտես մըն էր, ըսաւ
խնդալով :

Վերջին խօսքը գիտ շանթահարեց :

— Հասկցա՞ր, աղջկան հաւներ է՞ ըսի :

— Չ'է, հաւներ : Դարձիս կառքին մէջ կը խօսէին,
լսեցի որ երիտասարդը աղջկան չէ հաւներ :

Այս յայտնութեան վրայ գոհունակութեան մեծ
ուենչ մը առի :

— Ի՞նչ պատճառաւ, դրախօմայի՞ համար, հարցուցի
աւելի հետաքրքրուելով:

— Չէ՞, ազջիւր պակզան 600 սակի ունի եղեր, ուս-
եալ չ'ըլլալուն համար չ'է հաւներ:

— Քովի տարիքոտ կիներ ո՞վ էր:

— Խըլավուզ է եղեր, միշտ ազջիւր կը գովէր,
բայց երիտասարդը դիւրաւ խարուսղ մէկը չ'էր երևար,
ասոր դէմ — դուն դիտես որ ճ... Եանին ազջիկն ալ
1,000 սակի ունէր, ուսեալ չ'ըլլալուն համար չ'առի —
կըսէր:

Կառասպանին շնորհակալութիւնս յայտնելով ճամ-
բեցի:

Խնդիրը գիշերը հօրս բացի:

— Ազջիկս, ըսաւ քանի որ նիւթ ահանէն աւելի բա-
րոյականը, արտաքինէն աւելի ներքինը կը փնտռէ,
ան քուկդ է. վաղը իրեն նամակ մը գրելով գրասեն-
եակս կը հրաւիրեմ և դորձը կը վերջացնեմ. յաջողու-
թեանս մասին փոքր կասկած մը իսկ չ'ունիմ:

— Մհ, հայրիկ, յաւիտեան երախտասպարտ պիտի
մնամ, եթէ յաջողիս, ինձ վերստին կեանք տուած
պիտի ըլլաս ըսի վիպը նետուելով:

— Անհագ եղիր ազջիկս, սպասասխանեց խեղճ հայ-
րիկս աչերը թրջելով:

Հիմա ուրախ և գոհ անկողինս պիտի մտնեմ:

Փ.Ս.

12 Սեպտեմբեր

Հայրս այսօր տեսակցութիւն մը ունեցեր է Տօք .
Բ . . . եանի հետ . երեկոյին երբ տանը սեմին ներս
ուտք կոխեց , առաջին խօսքը հետեւեալը եղաւ :

— Աչքդ լոյս ազջիկս , ամեն բան կամքիդ ու փա-
փաքիդ համաձայն կարդ ադրեցի :

— Ո՛հ , հայրիկ , կեանքս փրկեցիր , ըսի երեսները
համբուրելով :

Հայր ու ազջիկ շատ ուրախ ենք :

— Նամակիս վրայ այսօր դրասենեակ եկաւ , շա-
րունակեց հայրս , երկար բարակ խօսեցանք , գերազ-
նիւ հոգի մը ունի . երբ խնդիրը դրամօժիտի վրայ ե-
կաւ :

— Շիտակը կ'ամչնամ դրամական խնդիրի վրայ
խօսիլ , ըսաւ , գաղափարիս ու սրտիս հակառակ է ,
տակայն ի՛նչ ընեմ որ այնքան հարուստ չ'եմ , մասնա-
ւոր դժբաղդութիւններ պատրաստի դրամս սպառե-
ցին ; եթէ լոկ շահախնդրական նպատակի մը համար
ամուսնանալ ուզէի , հազարաւոր ոսկիներով շատոնց
ամուսնացած կ'ըլլայի : Խնդիրը տարրեր է , և դուք
ալ իբրև հայր ըսածիս իրաւունք պիտի տաք , որ ուղ-
ղակի ձեր ազջկան երջանկութեան կը վերաբերի . այս-
ինքն առած դրամօժիտովս կ'ուզեմ Ներսայայ եթէ ալ և
մասնագիտութեամբ մը պարապիլ , միասին տանելով
նաև ամուսինս : Եթէ այս նպատակս չ'ըլլար՝ դրամի
վրայ երբէք խօսք չը պիտի ընէի :

— Կը հաւատամ ձեր ըսածին , պատասխանեցի ,

տակայն մասնաւորապէս կը խնդրեմ որ լոկ դրամի համար չը մերժէք ձեզ սիրող սիրտ մը և ինձի պէս պատուախնդիր հայր մը, որուն միակ դժբաղդ ութ իւնն եղած է, այլ եւ այլ դէպքերով իր հարատու թեան կորսնցնելը, ձեր արժանիքը ձեր սեղածէն տասնապատիկ բարձր է, բայց ի՞նչ օգուտ որ այսօր այդ շընչին գումարը կանխիկ վճարելու պատրաստութիւն չունիմ :

— Ինչպէս յայտնեցի, ըսաւ, կը ցաւիմ որ ստիպուեցայ դրամի վրայ խօսիլ. եթէ դուք մեզի չ'օգնէք, մեր ապագան մէկ երկու տարի ուշացուցած պիտի ըլլաք, վասն զի Եւրոպա գնալու համար հարկ եղած գումարը մէկ երկու տարուան մէջ հազիւ պիտի կըրնամ շահիլ. իմ բուն նպատակս ամուսնանալուս պէս միասին ճամբորդել էր :

— Անհոգ եզիք, բոլորովին անտարրեր չ'եմ գըտնուիր, ըսի, մաս մը բան կանխիկ կը վճարեմ, մնացածն ալ տարուէ տարի որոշեալ գումար մը վճարելով կ'ամբողջացնեմ, ինչպէ՛ս, կը հաւանի՞ք . . . :

— Արդէն խօսեցայ ձեզ թէ դրամականը երկրորդական տեղ մը կը բռնէ, ձեր կամքը չ'եմ մերժեր. միայն ամուսնութիւննիս մէկ երկու տարի վերջը տեղի կրնայ ունենալ, այդ գումարը Եւրոպա ապրելու չը բաւեր :

— Դուք գիտէք, այդ մասին բոլորովին ազատ էք, ըսի :

— Այո՛, դեռ պէտք է մէկ երկու տարի գաւառները մնալով հարկ եղած գումարը հայթայթել և ամուսնանալէ վերջը միասին Եւրոպա անցնիլ :

— Շատ լաւ կը խորհիք, բայց կը խնդրեմ որ զինքը ապահովէք ձեր հաւանութեան նշանը նուիրելով, ըսի :

— Լաւ կ'ըլլայ, ըսաւ. ինչպէս որ կամիք պատ-
րաստ եմ:

— Շնորհակալ եմ, պարզ խօսք-կապ մը բաւական
է, ըսի:

Վերջապէս, ինչպէս կը տեսնես խնդիրը բոլորովին
սրտիդ համաձայն վերջացուցի, վաղ գիշեր ինձի հետ
պիտի դայ ձեռքդ ուղեւո՛ւ:

Հօրս այս ուրախառիթ լուրին վրայ հանդարտելով
սկսայ երջանիկ ու խաղաղ ապագայ մը, ամուսնական
կեանք մը երեւակայել, . . .:

14 Սեպտեմբեր

Երէկ գիշեր հօրս հետ միասին եկաւ ապագայ ա-
մուսինս Տօք. Բ. . . եան:

Ո՛հ, երթալով աւելի գեղեցիկ ու աւելի համակ-
րելի կ'երեւայ ինձ. կ'զգամ թէ տակաւ առ տակաւ
սրտիս խորերը սուրբ և անկեղծ սէր մը կը ծնի:

Միասին ճաշեցինք. ճաշէն վերջը հայրս ոտքի ելաւ
և ձեռքս անոր ձեռքին մէջ դնելով սկսաւ մեր միու-
թիւնը օրհնել:

Նոյն միջոցին ձեռքս ձեռքին մէջ կը դողար:

Այլ ևս խօսեցեալս էր, խնդրեցի որ զիս դույնէ:

— Ո՛հ, այս գիշեր կենացս կ'ն հաճելի և էն նա-
խանձելի օրերէն մին եղաւ. կարծես մէկ վայրկենի
մէջ բոլոր տառապանքներս մոռցայ և նոր երջանիկ
կեանք մը սկսայ: Յուսացած էս աւելի լուրջ, աւելի
տաղանդաւոր և աւելի ազնուասիրտ է եղեր:

Իրմէ խնդրեցի որ մեր այս միութիւնը պաշտօնա-
կան կերպով նուիրագործուի . հաճեցաւ եւ որոշեց
ամսոյս 21ին կատարել :

Այս յաջողութեանս լուրը բարեկամիս Տօք . Տ . . .
եանի գրելով շնորհակալութիւնս յայանեցի : Ինքն ալ
խօստացաւ գրել :

Այսօր երեկոյեան դէմ մեկնեցաւ :

18 Սեպտեմբեր

Այսօր խօսեցեալս եկաւ . իր հեղինակութիւններէն
երկու գիրք անգլիական օսկեզօծ կազմով ինձ նուիրեց :

Կողքերուն վրայ հեռեւեալը գրած էր :

Նուէր սիրոյ եւ համակրանաց

Ան իւր պատեցեալ խօսեցեալն թ . . .

1878 Սեպտ . 14

Տօք . Բ . . . եան

Հակառակ իր լուրջ բնաւորութեան եւ դրական
արուեստին , սիրող և զգայուն սիրտ մը ունի :

Առաւօտները անկողինէն ելլելէն վերջը զինքը
հագուեցնելով մեծ հաճոյք կ'զգամ :

21 Սեպտեմբեր

Այսօր ինձ համար նուիրական է . Սեպտեմբեր 21
թուականը կեանքիս արշալոյսը , երջանկութեանս նա-
խադուռը եղաւ :

Այլ եւս աշխարհի վրայ մինակ չ'եմ, ապագաս իր-
մով ապահովեալ է, միասին երջանիկ կեանք մը պիտի
վարենք. պահապան հրեշտակի մը պէս զինքը թեւե-
րուս մէջ պիտի հանգչեցնեմ. . . :

Այսօր մեր երկու տան քահանաները Ազգային
Պատրիարքարանի մէջ ազգականներու և բարեկամ-
ներու ներկայութեան նշանախօսութիւննիս կատա-
րեցին :

Մեր միութիւնը նուիրագործող եւաչը մեր տան
քահանան բերելով, հիւրասենեկին մէջ սեղանին վը-
րայ ի տես գրի :

Բազմաթիւ այցելութիւններ և շնորհաւորութիւն-
ներ ընդունեցի :

Բարեկամներս ուրախացան և թշնամիներս տըրտ-
մեցան :

Թշնամիներուս առջեւ Աստուած զիս ամօթով չը
ձգեց, արժանիքիս ու գաղափարիս համաձայն ամու-
սին մը պարգեւեց :

22 Սեպտեմբեր

Պաշտելի խօսեցեալս այսօր գալով մեր սիրոյն իբր
նշան ադամանդազարդ խորհրդաւոր մատանի մը նը-
ւիրեց. որուն ներքին կողմը գրուած է իր անունը և
Սեպտ. 21 թուականը :

Մի եւ նոյն թուականը եւ անունս կրող ոսկիէ
պարզ օղակ մ'ալ ես իր մատը անցուցի :

Յերեկուան ճաշէն վերջը միասին կառք նստելով Պու-
սոյ կողմը անցանք, նախ լուսանկարչատուն մը երթա-

լով զոյգ մը կենդանագիրն իս հանել առինք, յետոյ իրենց առնը երթալով մայրիկին ձեռքը համբուրեցի: Յեր մայրը մեր միութիւնը օրհնեց և արտասուելով աչերս համբուրեց:

Համբուրելէ վերջը աղամանդագարդ մանեակ մը նուիրեց:

Քիչ մը դաշնակ դարնելէ վերջը ճաշի նստանք:

Զարմանալի դիպուածաւ մը նոյն օրը այցելութեան եկան իմ բարեկամուհիս Տիկին Տօքթ. Տ. . . եան, հանրածանօթ Տօք. Թ. . . եան, այս առթիւ ծանօթացայ նաև բանաստեղծ Ա. Հ. ի և գրագէտ Մ. Գ. ի հետ:

Զուարճալի և հեշտաւետ օր մը անցնելով երեկոյին միասին Գատը գիւղ դարձանք:

23 Սեպտեմբեր

Այսպէս պարզ կերպով, առանց շշուկի, առանց ցոյցի և առանց աղջիկաեսի տաղտկալի սովորութեան մեր նշանախօսութիւնը վերջացաւ: Ամերիկեան վկայութեամբ մէջ յիշուած կեանքով կ'սկսէր մեր ապագայ երջանկութիւնը, և եթէ ինձ մնայ, հարսանիքն ալ նոյն պարզութեամբ կատարել կ'ուզեմ:

Հին սովորութիւնները և ձեւակերպութիւնները ռանակոխ ընելով, ուղղակի սիրտ սրտի և ձեռք ձեռքի առինք:

Միակ ցաւս իր մեկնիլն է. սիրեցեալ խօսեցեալս մէկ քանի օրէն Գ. . . քաղաքը պիտի մեկնի, պաշտօնին գլուխն անցնելու համար:

Ոհ, հազիւ մի քանի օր վայելած պիտի թողում որ

բաժնուի . . . , սրտիս շատ դժուար կ'ուզայ այս . եթէ հօրս կարողութիւն ունեցած ժամանակ հանդիպէր, հիմայ պսակուած եւ միասին եւրոպայ ճամբորդած կ'ըլլայինք եւ բաժանման այս սրտմաշուելը չ'ի ունենար :

Է՛հ , այսչափ անյաջողութենէ վերջը ժամանակ մըն ալ կը համբերեմ . ամեն վարդ իր փուշը ունի :

24 Սեպտեմբեր

Նրէկ գիշեր խօսեցեալիս հետ Ս . . . ետն ԼՖ . ի այցելութեան դայինք . վերջը բոլորովին անցած է , սակայն ընդհանուր առողջութիւնը դեռ գոհացուցիչ չ'է : Շատ ուրախ օր մը անցուցինք :

Պօսեցեալս այսօր մեկնեցաւ :

29 Սեպտեմբեր

Այսօր խօսեցեալս դալով միասին Բերայ շրջագայեցինք :

Երեկոյեան դէմ լուսանկարչատուն հանդիպելով մեր զոյգ կենդանազիրները ստացանք . շատ դեղեցիկ ելած են , որոնցմէ մէյմիկ օրինակ բարեկամներու պիտի նուիրենք :

Տուն հանդիպելով երեկոյին Գատը-գիւղ վերադարձանք :

Այս գիշեր միասին աշակերտուհիս այցելեցինք , ամենէն շատ ուրախացողը ինքն եղաւ :

Այսօր խօսեցեալս մեկնեցաւ իր հրաժեշտի վերջին
ողջոյնը եւ վերջին համբոյրը սալով :

Ա՛խ, այս բաժանումը ամբողջ արիւնս սառեցուց .
գիշերն ի բուն արտասուեցի :

Առաւօտուն կանուխ գիրար ողջագուրելէ վերջը ե-
տեւէն մինչեւ դուռը իջայ, քայլերս կը կասկին, ոտ-
քերս իրար կ'անցնէին, երկար տարիներ գինքը չը
տեսնելս մտարեւելով կը խենդենայի . . . :

Ո՛հ, վերջապէս, դրանը առջեւ վերջին անդամն
ձեռքս սեղմելով յուզեալ ձայնով ըսաւ :

— Մնաս բարեա՛ւ հոգիս, քաջ եղիր, ցտես :


Նոյն պահուն արտասուքներս չը կրցի զսպել . . . :

Հօրս հետ կառք մտնելը միայն տեսայ . . . :

Գրան առջեւ, բակին մէջ մարեր ինկեր եմ, ըս-
պասուհիս աշխատեր է գիս ուշաբերել . . . :

Երբ աչերս բացի, մահճակալիս մէջ էի :

Քնատ ըլլալուս անկողինէս չ'ելայ, բաւական քնա-
նալէ վերջը արթննալով սկսայ օրագրութիւնս շարու-
նակել . . . :



Ժ.Ռ.

Այսօր խօսեցեալիս անդրանիկ գիրն ստացայ,
հոկտ. 17 ին ողջամբ իր պաշտօնավայրը հասնիլը կ'ի-
մացնէ :

Ի՞նչ անուշ գրիչ, ի՞նչ բանաստեղծական ներշնչումներ, բոլոր սիրտը ու հոգին այդ նամակին մէջ դրած է. իր այնքան եռանդալից սիրոյն ի՞նչպէս պատասխանելու չեմ գիտեր :

Վերջապէս սրտիս պէս պարզ գրիչ մը գործածելով, իր բաժանումէն զգացած վիշտս նկարագրեցի և խնդրեցի որ ամեն շարաթի պանկալի եւ սիրալից գիրն պակաս չընէ : « Անոնք իմ միակ մխիթարութիւններս » պիտի ըլլան, կարօտդ անոնցմէ պիտի առնեմ, ա- « նոնցմով պիտի թեթեւցնես բաժանումէդ զգացած » տխուր տպաւորութիւններս » գրեցի :

1 Ապրիլ 1830 [*]

Յօսեցեալիս յաջողութեան լուրերը սիրտս ուրախութեամբ կը զեղուն, ո՞չ, արդեօք երազ մը չէ՞ այս . . . , վերջապէս զինքը գրկացս մէջ պիտի տեսնեմ, ի՞նչ երջանիկ օ՛ր . . . :

Մէկ երկու ամիսէն վերջնականապէս նա իմս պիտի ըլլայ. իր բաժանումը երկու տարիի կը մօտենայ համբերութիւնս սպառեցաւ : Այս օրուան նամակը

[*] 1378 հոկտ. 26 էն մինչեւ 1830 Ապրիլ 1 օրագրութեան մէջ յիշելու արժանի բան մը չտեսնելուս զանց կ'աւնեմ : Միայն սաչափը կը յիշեմ որ այդ մէկուկէս տարուան մէջ սիրատարի, սրտայոյզ եւ իմաստալից նամակներու փոխանակութիւնը երբէք զաղրած չ'է, եւ այդ զաղափարներու եւ յուզումներու փոխանակութեամբ երկուստէք իրենց սիրոյն մէջ այնքան յառաջացած են որ զիրար կը պաշտեն :

սովորական գիր մը չ'էր, այլ ուրախութեան աւետիս
մը, սիրոյ պատգամ մը որ ինձ ապագայ երջանկու-
թիւնը կ'աւետէ :

Այսօր գրեցի որ իւր գալուստը փութացնէ. եւ
գիրս այսպէս վերջացուցի : « Անկեղծ եւ պաշտելի
« սէրդ էր որ ցարդ ինձ համբերել տուաւ, սիրտս կը
« հատնի. օր մը առաջ գքեզ գրկացս մէջ տեսնելու
« անգուսպ փափաքով կը հալիմ ու կը մաշիմ, ա՛խ,
« սիրովդ պիտի խենդ ենամ. . . » :

« Ե՞րբ պիտի համբուրեմ ազու եւ մեղուանուշ ա-
« շերդ ու մեղրած որ շրթերդ . գքեզ տեսած վայրկե-
« նիս անկասկած պիտի նուազիմ. . . » :

6 Մայիս

Վաղը Պոյանը գիւղ օդափոխութեան պիտի եր-
թամ, մարմինս ու հոգիս կազդուրելու մեծ պէտք
ունիմ. անցեալ շարթուան հարբուխս դիւ շատ աղա-
բացուց :

Պոյանը գիւղ, 9 Մայիս

Այսօր մայիսի գեղածիծաղ և կենսաւէտ օդը վա-
յելելու համար ազգականուհիիս հետ Մասլախ գա-
ցինք. մշտադալար և հոգեղմայլ դաշտերուն և մար-
դերուն մէջ կարկաշատս առուններու եզերքը ազատ
էրջելով առողջաւէտ մաքուր օդը վաթոք ծծեցի. . . :

Այցելեցի նաև կայսերական գղեակը, մրգալից պարտեզը և մինչև Քեաղթ խանէ տարածուող գեղատեսիլ պուրակը :

11 Մայիս

Երկու օր Մասլախ մնալէ վերջը գիւղ դարձանք, այս քանի մը օրուան մէջ նախկին առողջութիւնս վերստացայ :

Բժիշկներուն գովածին շափ կայ եղեր, մարդ երբ բաց դաշտերու մէջ մաքուր օդ ծծէ և մարմնական շարժումներ կատարէ, իր վրայ առաջապէս անոնց լաւ արդիւնքը կ'զգայ եղեր :

25 Մայիս

Այսօր հայրիկէս գիր մը ստացայ, պաշտեցեա խօսեցեալիս ճամբայ ելլելը կ'աւետէ. հեռագիրն գրոյն ծոցն ներփակած էր :

Այս ուրախառիթ լուրն առնելով սիրտս սաստիկ արօփել սկսաւ, դադար չ'ունիմ. եթէ գիրք ուշ չը հասնէր, անմիջապէս շոգենաւ պիտի նետուէի, դրժբաղդարար վտարէն իջնող վերջին շոգենաւը մեկնած էր :

Գատը գիւղ 26 Մայիս

Երէկ գիշեր աչերս ուրախութեան քուն չը տեսան. անկողինիս մէջ միշտ ապագայիս վրայ մտածելով քու-

նրս փախուցի: Սաղաղաւէտ եւ բարեբաստիկ ընտա-
նեկան կեանք մը կ'երեւակայէի, օգային դղեակներ
կ'ստեղծէի...: Ո՞հ, ինչ անո՛ւշ, որքան հաճելի գի-
շեր մը անցուցի, որուն նմանը Հազար եւ մէկ գիշեր-
ներուն մէջ իսկ տեսած չ'եմ...:

Սամաթիա, 27 Մայիս

Այսօր հոգեհա՛նս դիմաւորելու համար եզրօրս ե
քոյրերուն ու բարե՛ններուն հետ շոգենաւ գացինք:

Երբ մեր նաւակը շոգենաւին մօտեցաւ, սկսայ
թաշկինակս շարժել. ինքը թէեւ տախտակամած ին վը-
րայ էր, սակայն մեզ չը կրցաւ տեսնել:

Ծովուն վրայ ահագին իրարանցում մը կար, ժխո-
րէն իրարու ձայն չ'էինք լսեր. մարդ ասանկ տեղեր
ապուշ կը դառնայ:

Շարունակաբար ճամբորդները շարժուն նեղ սան-
դուխներէն իջնելով նաւակները կը նետուէին, որոնց
մէջ կը գտնուէին շատերուն ծնողները եւ բարեկամ-
ները. սրտայոյզ գրկախառնումներ եւ արտասուալից
ողջագուրանքներ իրարու կը յաջորդէին...:

Իսկ ես այս սրտայոյզ տեսարանէն կարի զգած-
եալ արտասուալից աչերս սրտահատորէս չ'էի հեռա-
ցընէր, թաշկինակս միշտ կը շարժէի:

Վերջապէս մեզ տեսաւ, եւ ժպտելով թաշկինակը
շարժեց: Մեր նաւակը շոգենաւին աւելի մօտեցու-
ցինք եւ ինքն ալ դէկին կողմը գալով լսելի ձայնով մը
ըսաւ:

— Ողջո՛յն ձեզ ո՞վ սրտահատորներս , ողջո՛յն քեզ
ո՞վ ցանկալիդ Ռիւզանդիս :

Յետոյ աւելցուց :

— Մի՛ աճապարէք , բազմութիւնը թող անցնի :
Կէս ժամ իրարու երես նայելով սպասեցինք , խօ-
սելու բառ մը չ'էի գտներ :

Բազմութիւնը նուազելով նաւակնիս սանդուխին
մօտեցուցինք , անմիջապէս մէջը ցատկեց , սկսանք կար-
գաւ իր սեւ աչերը կարօտալից համբուրել , ինքն ալ
մերինները :

Նաւակը մաքսին առջեւ կայնելով դուրս ելանք , և
երկու կառք վարձելով ուղղակի իրենց տունը գացինք :

Հոն ալ սկսաւ կարօտակէզ և ջերմաջերմ համբոյր-
ներու և սրտայոյզ ու խանդալից արտասուքներու
տարափ մը ,

Գատը գիւղ , 29 Մայիս

Երկու օր խօսեցեալիս հիւր մնացի , թէ Պօլսեցի եւ
թէ գաւառացի բարեկամները խուճախ խուճախ այցելել
սկսան : Այսօր հօրս հետ Գատը գիւղ եկայ :

6 Յունիս

Այսօր թշուառական Մ . . . իր արդար պատիժը
գտաւ , 2000 ոսկի դրամօժիտով կուղ աղջկան մը հետ
ամուսնանալով :

Աշակերտուհիս եւ ես շատ ուրախացանք ,

7 ՅուՆիս

Սօսեցեալս այսօր իր փոքր քեռդուստրին հետ մեզի եկաւ :

Դաշնակ ածելով, Պարոնեանի Ազգային Ջոզերը կարդալով եւ գեղարուեստներու վրայ խօսելով ժամանակ անցուցինք :

Երեկոյին հայրիկիս հետ խորհրդակցելով հարսանեկան պատրաստութեանց վրայ դադարաւոր փոխանակեց, քիչ յետոյ ես ալ խօսքի խառնուելով որոշեցինք պարզ և համեստ կերպով կատարել :

Եկեղեցին պսակուելէ վերջը ցերեկին ազգականներու և բարեկամներու հացկերոյթ մը տալով հանդէսը պիտի վերջանար : Ահա այս էր մեր որոշումը :

8 ՅուՆիս

Սօսեցեալս այսօր մեկնեցաւ օժիտիս վրայ իր հիացումը յայտնելով, որ դրեթէ ամբողջովին ձեռքովս պատրաստեր եմ :

20 Սեպտեմբեր

Այսօր բարերազդու թիւն ունիմ ամուսինս կոչելու Տօք . Բ . . . եանը և իր մականունը կրելու :

Հարսանեաց հանդէսը, ինչպէս կանխաւ որոշած էինք, այնպէս պարզ կերպով կատարեցինք :

Այս առթիւ ազգականներէ և բարեկամներէ թանկագին նուէրներ ստացայ, սրտովին շնորհակալ եմ իրենց :

Այժմ կ'զգամ թէ պարտականութիւնս և պատասխանատուութիւնս մեծ է, կինը տանը հիմն է, ամեն ջան ի գործ պիտի դնեմ զինքը գոհ եւ երջանիկ ընելու :

Փառք կուտամ Աստուծոյ որ այնքան դրկանքներէ ու տառապանքներէ վերջը, այս օրուան երջանկութիւնը ինձ պարգեւեց : Կատարեալ և օրինակելի ամուսիններ պիտի ըլլանք և տունը դրախտի մը պիտի վերածենք :

Սրտակից ու գաղափարակից էինք արդէն, ուրեմն նախանձելի միութիւն մը պիտի կրնանք կազմել :

Յետ այսու կը յուսամ և կը մաղթեմ թէ Յիսուսակարանիս մէջ միշտ ուրախ դէպքեր և բարեբաղդ կեանքի մը հետքերը պիտի կրնամ արձանագրել :

22 Փետրուար 1881

Ո՛հ, ամուսնական կեանքին մէջ ի՞նչ ցանկալի ու սրտադրաւ քաղցրութիւններ կան եղեր :

Այսօր ալ մի նոր ուրախութիւն, անփոխարինելի նոր հաճոյք մը կ'զգամ. բոլորովին նոր եւ քաղցր պարտականութիւն մը եւս պիտի ունենամ. . . այո՛, քանի մը ամիս վերջը մայր պիտի ըլլամ. . . :

Յղութեան վիճակս ջղային տկարութիւնս երեւան հանեց . մի քանի օրէ ի վեր սաստիկ կը տառապիմ . քունս բոլորովին խանգարուած է եւ ամբողջ ջղային դրութիւնս գրգռուած :

Թէեւ հիմա այնչափ հոգ չ'եմ ըներ , ամուսինս քաւական փորձառու եւ հմուտ բժիշկ մըն է , հարկ եղած դարմաններն գործադրել սկսաւ . քիչ օրէն օգուտը տեսնել կը յուսամ :

Ամուսինս ճամբորդութեան նպաստաւոր ըլլալը յիշելով կարծիքս հարցուց :

Արդէն Պոլսոյ կեանքէն ճանճրացեր եմ , հետեւաբար սրտահատորիս ըսի :

— Գաւառական կեանքը շատ կը գովէիր , բնութիւնը վայելել ուզողը թո՛ղ գաւառները պտտի կ'ըսէիր . արդ քանի որ ճամբորդութիւն մը , օղափոխութիւն մը անհրաժեշտ է , չ'ըլլա՞ր որ մօտակայ քաղաքները շրջագայինք :

— Շատ լաւ կ'ըլլայ , պատասխանեց անպատմելի ուրախութեամբ մը , արուեստիս շնորհիւ դրամ ալ կը շահիմ . միասին ձիերով դաշտերը , անտառները կը պտտինք , ջրերու եզերքները կը շրջինք , գիւղազնայութիւններ կ'ընենք . ասոնք այնպիսի հաճոյքներ են որ հոս ձեռք չը բերուիր :

— Ուրեմն , այս շարաթ ճամբայ ելլենք , ըսի :

— Ամենայն ուրախութեամբ, պատասխանեց :
Կաշիէ իոքքր պայուսակներու մէջ վիրաբուժական
գործիները և անհրաժեշտ ազդու դեղերը զետեղե-
լով ըսաւ :

— Ահաւասիկ, ես պատրաստ եմ, դու ալ քու
պատրաստութիւններդ տես :

Ես ալ միւսնոյն ատեն կաշիէ երկու մեծ ճամ-
բորդութեան յատուկ սնտուկներու մէջ դրի ճերմա-
կեղէն, հանդերձեղէն և առօրեայ կեանքի վերաբեր-
եալ անհրաժեշտ նիւթեր :

Ուրեմն ճամբորդելու համար ամեն բան պատրաստ
է. բնութիւնը իր մերկութեան մէջ վայելելու փափա-
քը և ուրախութիւնը այժմէն իսկ իմ վրայ լաւ ներ-
գործ եցին :

ԺԿ.

Իզմիտ, 25 Ապրիլ

Այսօր Հայտար Բաճայէն երկաթուղի նստելով Իզ-
միտ հասանք :

Պանդոկ մը իջնելով այսօր հանգիստ ըրինք, վաղը
ձիերով քաղաքին նշանաւոր և գեղատեսիլ վայրերը
պիտի այցելենք, մանկան մը ալէս ուրախ և զուարթ
եմ :

26 Ապրիլ

Այսօր քաղաքին շուրջը պտտեցանք և շրջակայ
գիւղերը այցելեցինք : Որչա՛ փ ախորժելի բնական տե-
սարաններ և զմայլելի դիրքեր . . . :

27 Ապրիլ

Ձիերով մօտակայ անտառները պտոյտ մը կատարեցինք : Հիանալի ու խորհրդաւոր պատկերներ, որոնց գգուանոյշ տպաւորութեան տակ հիւանդութիւնս գրեթէ անհետացաւ :

29 Ապրիլ

Սիրելի ամուսինս բաւական թուով հիւանդներու այցելութիւնը ընդունելով այսօր դուրս չը կրցինք ելլել :

Այսօր մէկուն աչակոպին վրայ գործողութիւն մը կատարեց : Ո՛հ, առաջին անգամն էր որ դանակ բռնելը կը տեսնէի . արհեստին մէջ ո՞րչափ քարասիրտ է եղեր, երբէք չ'էի յուսար թէ իր ազնիւ ու փափուկ սիրար այսքան խիստ ըլլայ . . . :

6 Մայիս

Ամուսինս Իզմիտի մէջ մի քանի օր մնալով բաւական գործ տեսաւ : Չարմանալի բան, Պոլսոյ պէտտեղ մը այնչափ ծանօթ ունենալով հանդերձ բաղդատմամբ քիչ կը շահէր :

Այսօր ն . . . քաղաքը երթալու համար ճամբայ պիտի ելլէինք, բայց օդը անձրեւոտ ըլլալուն հետաձրգեցինք :

Խեղճ գիւղացիի մը վրայ ամուսինս այսօր ալ գործողութիւն մը կատարեց վարի շրթունքին մեծ մասը

կտրել հանելով. այս գարշելի կտորը ոգելից շիշի մը մէջ դնելով վրան ախտին անուներ, գործողութեան թուականը կրող ցուցակ մը փակցուց :

Ն. . . , 10 Մայիս

Մի քանի օր ձիերով ճամբորդելով Ն. . . քաղաքը հասանք :

Յերեկները ճամբուն վրայ, պաղուկ անոյշ աղբերակներու եզերքը բազմելով մեծ ախորժով կը ճաշէինք :

Այս քաղաքը շատ սիրեցի, ինչ բանաստեղծական դիւթիչ լեռնային դիրք մը ունի, հապա՞ առողջարար օդն եւ կենսաւէտ պաղուկ անուշ ջուրն . . . :

Գարունը հոս անցնել որոշեցինք :

15 Մայիս

Ամուսինս իր համբաւը հոս ալ շինեց, թէ եւ ուրիշ բժիշկ մը կայ, սակայն տեղացիք անկէ դժգոհութիւն կը յայտնեն :

Իգական սեռն ալ բաւական զարգացած անդամներ ունի, հոս Պոլսէն բոլորովին տարբեր ընկերական կեանք մը կայ, ինչ որ ինձ շատ հաճելի թուեցաւ. առանց ձեւակերպութեան, պարզ և անկեղծ ընտանեկան կենցաղավարութիւն մը ունին :

Այսօր տան մը մէջ մասնաւոր սենեակ մը վարձեցինք :

20 Յունիս

Այս տեղի կեանքը շատ սիրեցի. ջղային հիւանդութիւնս բաւական թեթեւցաւ և դիրնալ սկսայ :

Ամուսինս լաւ կը շահի, ընդարձակ սպարտէզով
չըջապատուած գեղեցիկ տուն մը վարձեցինք, նոր բը-
նակարաննիս թէեւ քաղաքին ամենէն հեռու մէկ ան-
կիւնն է, սակայն սքանչելի դիրք մը ունի, առջեւը
սպարզուած է կանանչ դաշտը և անհուն հորիզոնը . . .

25 Յունիս

Բաւական կոկիկ և ճաշակաւոր ընդունելութեան
սենեակ մը զարդարեցի :

— Ի՞նչպէս, թռչունս, գաւառները հաճելի չեն
ըսաւ ամուսինս :

— Ո՛հ, շատ լաւ կը գտնեմ, մանաւանդ այս քա-
ղաքը, սպտասխանեցի, և եթէ կարելի է պիտի խընդ-
րեմ որ Պոլիս չ'իջնենք. հայրս արդէն առանձնացեալ
կեանքը կը սիրէ, իսկ տիկին քոյրերդ տեսնելու հա-
մար Պոլիս տարին մէկ երկու անգամ կ'այցելենք :

— Ես արդէն մեծ քաղաքներու տաղտկալի և յու-
զումնալից կեանքէն ձանձրացած եմ, գաւառական
հանդարտ կեանքը ինձ հաճելի է և դուն ուր որ հան-
գիստ ընես՝ հոն կը բնակինք, ըսաւ :

— Ենորհակալ եմ, այս քաղաքը շատ սիրեցի, ու-
նեցած գոյքերնիս Պոլսէն հոս փոխադրենք, ըսի :

— Վաղուան սուրհանդակով հայրիկին կը գրեմ,
ըսաւ բարի ամուսինս :

Ահա այսպէս որոշեցինք հոս մնալ :

Բանաստեղծական և գեղջուկ կեանքը վէպերէն
դուրս հոս միայն կրցի գտնել, ասոր համար շատ ու-
րախ եմ :

Այսօր ամուսինիս հետ տեղւոյս ազգային վարժարանները այցելեցինք. տարեկան հարցաքննութիւնք սկսեր էին: Երկսեռ ուսանողները բաւական քաջ պատասխաններ տուին, բայց դպրոցը բարեկարգութեան պէտք ունի. ծրագիրը ժամանակիս և միջավայրին պահանջածին համեմատ փոփոխութիւն կրելու է, որպէս զի դպրոցը իրականապէս իր նպատակին ծառայէ:

Պարապ ժամերուս ծրագիր մը շինել եւ ազջկանց դպրոցին ղէկը ձեռքս առնել հոգարարձութեան խոստացայ: Ամուսինս Առողջաբանութեան, իսկ ես Առսրնին ցնեցութեան, Իրագիտութեան եւ Ձեռագործի դասեր պիտի աւանդենք ձրիարար:

Աշխատութիւններս պարապ չելան, իգական սեռէ ընկերութիւն մը կազմել յաջողեցայ, որուն նպատակն է իգական սեռի դաստիարակութեանը եւ կրթութեանը նիւթապէս ու բարոյապէս նպաստել:

Գաւառացի կիները հանրային ծառայութիւն մատուցանելու թէ կամք եւ թէ յարատեւութիւն ունին, միայն իրենց առաջնորդող մը պէտք է:

Նոր ծրագիրս դպրոցին վերաբացման գործադրութեան պիտի դրուի, տարեչրջանին հետ պիտի սկսինք աւանդել նաև մեր դասերն:

Յղութեանս վերջին ամիսներն է, բաւական անհանգիստ եմ. ջիւերս այսօր թեթեւ կերպով գրգռուեցան. երկու ժամ վերջը անհետացան:

Այսօր մէջքս պարբերաբար թեթեւապէս ցաւիլ սկսաւ. ամուսինս տղաբերքի սկզբնական ցաւեր ըլլալը իմացուց:

Ո՛հ, քիչ օրէն զաւկի մա՛յր պիտի ըլլամ, ի՞նչ երջանկութիւն . . . :

Այս գիշեր տղաբերքի բուռն ցաւերս սկսան, որչա՛փ անտանելի ցաւ, հիմա որ կը գրեմ քիչ մը դադարած է, դադարման միջոցը երթալով կը կարճնայ եւ ցաւին աստիճանը կը սաստկանայ:


Բարեկամուհիներէս շատերը քովս են, միշտ զիս կը քաջալերեն:

Չաւակ մը ունենալու յոյսը իմ ցաւերս կը թեթեւցընեն, միտքս բոլորովին անով գրադած է. որչա՛փ պիտի գգուեմ զինքը և իմ յատուկ ծիծերովս զիեցընեմ. . . ի՛նչ մեծ հաճոյք . . . :

21 Սեպտեմբեր

Երէկ գիշեր երկունքս վերջացաւ . սիրուն մանչ
զաւակ մը ծնայ :

Հակառակ ամուսինիս արգելքին սոյն երկասղովս
սիրասուն զաւկիս ծնունդը կ'արձանագրեմ . . . մա՛յր
եղայ (*)



ԺԴ.

22 Սեպտեմբեր

Այսօր թէեւ օրագրութիւնը շարունակել ուզեց ,
իրեն խստիւ արգիլեցի , մտաւոր եւ մարմնաւոր կա-
տարեալ հանգստի մեծ պէտք ունէր :

Չաւակը գգուանքներով ու ջերմագին համբոյրնե-
րով ծածկեց

23 Սեպտեմբեր

Երեւակայելի ծննդարեւական բոլոր վտանգներու
դէմ հարկաւոր կանխազգուշութիւններն ձեռք առած
ըլլալով հանդերձ , այսօր խել մը վնասակար ախ-
տանիչեր տեսայ , ինչպէս կենդանական ջերմութեան
բարձրացում , փորի սաստիկ ցաւ և փոխում . բոլոր այս
ախտանիչերը վտանգաւոր հիւանդութեան մը , բիրի-
քօնիքի գոյութիւնը կ'ապացուցանէին . . .

[*] Մնացած մէկ տողը չ'էր կարգացուէր . բուն ձեռագիրը հոս կաւարտի : Սեպտ . 21էն վերջը գրուածները ինչպէս յայտնի է՝ ամուսինը շարունակած է : Ծ . 2 .

Իր այս վտանգաւոր վիճակը տեսնելով սիրտէս արիւն կ'երթայ :

24 Սեպտեմբեր

Հակառակ բոլոր ջանքերուս և ազդու դարմաններուս հիւանդութիւնը արագ շրջան կ'ընէ : Շատ անգամ զիս ալ չը ճանչնար , միշտ կը զառանցէ . Սատուած իմ , անյուսալի վիճակ մը ունի , պիտի խենթեանամ . . . :

Իր այս ծանր վիճակին մէջ կէս օրին յանկարծ ուշարեցելով զաւակը տեսնել ուզեց :

Զգուշութեամբ զայն իրեն մօտեցուցի :

— Զաւա՛կս , զաւա՛կս . . . , ըսաւ , խենթի պէս աչերն բացած եւ խփոյն անզգայ ինկաւ :

Կէս ժամ վերջն ալ հողին աւանդեց . . . :

Վրան ինկայ և յորդահոս արտասուքներովս զինքը ծածկեցի :

Բարեկամուհիները դժուարաւ զիս անկէ բաժնեցին . ո՛հ , երանի թէ երբէք չը բաժնէին ու զիս անոր հետ թաղէին . . . :

Կենացս մէջ առաջինն անգամն է որ սիրտս ու կեանքս խորտակող սիրելիի մը կսկծալի մահը կը տեսնեմ . . . :

25 Սեպտեմբեր

Երէկ երեկոյին սրտահատորիս թաղման հանդէսը կատարելով իր փափուկ մարմինը ցուրտ սեւ հողին յանձնեցի և ձեռքովս ու արտասուքովս կնքեցի իր գերեզմանը :

Իր յիշատակը սրտիս խորերը անջինջ պիտի մնայ և
իր գերեզմանը նուիրական ուխտատեղի մը :

Այսօր նորածին զաւակիս համար յարմար ստնտու
մը վարձեցի :

Իր ցաւալի մահը այսօր թէ հօրը և թէ մեր տունը
գրեցի . զաւակիս ծնունդը կանխաւ հեռագրած էի :

Իր նուիրական կամքը յարգելով զաւակիս անունը
Պօղոս դրի . կենդանութեանը փափաք յայտնած էր
ըսելով :

— Եթէ մանչ ըլլայ՝ պապուս յիշատակին՝ անունը
Պօղոս պիտի դնեմ :

1 Հոկտեմբեր

Այսօր իր սնտուկը բացի . ո՛հ, իր օժիտը և հար-
սանեկան զգեստները տեսնելով դառն արտասուք-
ներ թափեցի . . . :

Իր Յիսուսակարանը ուղեցի կարողալ եւ իր վերջին
օրերը արձանագրել, ինչպէս որ ինքը շատ կը փափա-
քէր :

Այսօր սկսայ զայն ամբողջացնել ձգած թուա-
կանէն սկսեալ բաց օրերը արձանագրելով :

2 Հոկտեմբեր

Ինչպէս որ իր գերեզմանը ձեռքովս կնքեցի, նոյն-
պէս ձեռքովս կը կնքեմ իր Յիսուսակարանը :

Տէրը չը կամեցաւ որ միասին երջանիկ օրեր վայե-
լէինք :

Պատահածը ինձ համար ամենամեծ դժբաղդու-
թիւն մը, անդարմանելի կորուստ մըն է . միայն իր

սիրոյն ու անմեղ հոգիին իբր յիշատակ զաւակ մը թողուց որ յետ այսու մտրոյ՛ իեանքս անոր երջանկութեանը պիտի նուիրեմ :

3 Հոկտեմբեր

Երէկ ողբացեալ ամուսինիս օրագրութիւնը գրելով գրադեցայ . այս տխուր դէպքէն վերջը իր գերեզմանէն բաժնուիլ չ'ուզելով մարմարեայ գեղեցիկ շիրիմ մը կանգնել տուի :

Իր այս նուիրական յիշատակը ամեն օր արտասուքներովս պիտի թրջեմ և ծաղիկներով զարդարեմ . եթէ Պօղոսիկս քիչ մը մեծնայ , ձեռքէն բռնելով իր մօրը գերեզմանը պիտի առաջնորդեմ . . . :


Սրտահատորիս մեռած սենեակը իր սիրած գոյքերով եւ ձգած յիշատակներովը զարդարեցի :

Որպէս զի իր անմահ յիշատակը անմոռանալի մնայ , բնակած տունս ալ գնեցի :

Կտակի մը ոյժ ունենալու պայմանաւ աստ հետեւեալ տողերս արձանագրելով , կը կնքեմ երիցս ողբացեալ պաշտելիիս Յիւստակարանը . . . :

« Մեռնելէս վերջը զիս իր գերեզմանին մէջ թաղեցէք , այս է իմ միակ և վերջին կամքս : »

Վ Ե Ր Զ



Վ Ր Ի Պ Ա Կ Ք

Նրես	Տող	Սխալ	Ուղիղ
3	3	ուսու մնատենջ	ուսու մնատենչ
13	25	իրենց	իրեն
18	4	8 մարտ	3 մարտ
21	10	այդ	այն
26	21	pensé	pensé ըսաւ
27	9	այնմ	(ջնջեցէք)
27	15	թաւալ	թուող
32	28	courn	bourm
33	25	թափառական հրէային	թափառական Հըր- եային
35	6	սիրատենջ	սիրատենչ
48	12	(—)	այս գիծը ջնջեցէք
53	25	սրտմաշուք	սրտմաշուկ
54	10	բարի	բարձր
54	22	դասուկարգին	դասակարգին
64	26	(—)	այս գիծը ջնջեցէք




ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

	Գին	դր.
Մարիա՝ քէ Հայկանուց (վէպ)	5	»
Փուլնջ գիսական (բուլն, երազ եւայլն)	5	»
Աղջկան մը յիշատակարանը (վէպ)	5	»

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ

Մեր գիւղացիներուն բժիշկը
Հաւաքածոյ գիսական, առողջա եւ բժշկական
Փուլնջ վիպական
Փուլնջ Բանասիրական

Գին 5 դր.



1884A

2013

